



Rédaction et Administration :
7, Rue Papère — MARSEILLE

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԺԱ. Տարի - 30ԻԼԻՍ 1935



11^{me} Année - Juillet 1935



Խմբագրական

Գաղափարներ հետեւի

Dr. P. Berron

Հոգ. կեանք

Բաղադրիչ գրքերը

Սուրբ Օգոստինոսի խոստովանութիւնները

Զ. Բ. Պոլատեան

Շնորհաց ծովէն

Բրիտանիայի արեւմտեան զօրութիւնը իմ վրաս

Վերոնիգայ Բրուտեան

Կենաց ածուներէն

Գիրքերը բացուեցան

Գոտաւորանի օրը

Յովսէփ Զաքարեանց

Ս. Գրական ուսումնասիրութիւն

1) Սիմոն Նախարար, 2) Յակոբոս Սւրբէնեան

Գ. Գ. Խ.

Սերտողութիւն

Կիրակնօրեայ դասերու ներշնչումներ

Կենսագրական

Ճան Ուէսլի

Վ. Ս.

Երանկանց սիւնակ

Աղօթիկ եւ գործիկ

Յ. Բ.

Ահա Աստուծոյ Գաղա



ԲԱՆԲԵՐ հոգեւոր ամսագրերը Թէւ. ֆրանսահայ Աւետարանա-
կան եկեղեցիներու պաշտօնականներն է, այսու ամենայնիւ,
նպատակ ունի ծառայելու ամենուն, որոնք ճշմարտութիւնը
կը փնտռեն եւ ծարաւը կը զգան Աստուծոյ խօսքին անխաղախ
վկայութեան: Քանի որ ֆրիստոս չեկաւ միայն կարգ մը
անհատներու համար, այլ ամենուն, բնօրի ճշմարիտ «Բանօին»
ներկայացուցիչն ալ չճանաչար ու եւ յարմարութիւն մը,
հապա մէկ է անոնց հետ, որոնք ֆրիստոսի մէջ իրեն կը
միանան: ԲԱՆԲԵՐ կ'ուզէ ծառայել անոնց:

ԲԱՆԲԵՐ հոգեւոր ամսագրերը երկու վազոններով կը հրատարակուի Հայերէն եւ Թուրքերէն: Երկուքն ալ
կը տպուին Մարտէլի մէջ: Հայերէնը ունի 16 էջ (կողբէն գուրս), որուն խմբագրական մարմինն է,
Վեր. Յ. Ն. ՂԱԶԱՐՈՍԵԱՆ. Բրօֆ. Գ. Գ. ԽԱՅԻԿԵԱՆ. Պատք. Ս. ՊԱԳԳԱԼԵԱՆ. Վ. ՍԱՀԱԿԵԱՆ
Թուրքերէնը ունի 8 էջ ո'չ Թէ հայերէնին Թարգմանութիւնը այլ տարրեր ըզմանակութեամբ: Այս պարագան
գիւրսութիւն կուտայ որ Թուրքերէն գիտցող մը անկէ ալ կրնայ օգտուիլ: Թուրքերէն մասի պատասխա-
նատու խմբագիրն է՝

ԺՕԶԷՅ Կ. ՊԱՐՍՈՒՄԵԱՆ

18, Rue du Docteur Rebatel — LYON (France)

որոն ղրկուելու են նաեւ բոլոր Թուրքերէն յօդուածները:

ԲԱՆԲԵՐի համար յօդուած կրնան գրել անոնք միայն, որոնք
գիտեն վերստին ծնունդն ու հոգեւոր կեանքը եւ անոր մէջ
ապրելու ամենօրեայ ուրախութիւնը կը վայելին ֆրիստոսով:

|||||

ԲԱՆԲԵՐի բաժանորդագրութիւնը տարեկան է կանխիկ

— ԲԱՃՆԵԳԻՆՆ Է —

ՀԱՅԵՐԷՆԸ Ֆրանսա 20 Սուրիա 15 Ֆրանք
Արտասահման 20 Ֆրանք

ԹՈՒՐԿԵՐԷՆԸ Ֆրանսա 10 Սուրիա 7 Ֆրանք
Արտասահման 10 Ֆրանք

ՀԱՅԵՐԷՆ եւ ԹՈՒՐԿԵՐԷՆ միասին Ֆրանսա 25
Սուրիա 20 Ֆրանք եւ Արտասահման 25 Ֆրանք

Թղթակցութիւններ եւ յօդուածներ ղրկուելու են
Պատ. ՎԱՀԱՆ ՍԱՀԱԿԵԱՆԻ իսկ դրամական առա-
քումներ Վեր. Յ. Ն. ՂԱԶԱՐՈՍԵԱՆԻ անունով, եր-
կուքն ալ հետեւեալ հասցէով.—

Réd. «PANPÈRE» c/o Rev. H. N. GHAZAROSSIAN

7, Rue Papère

MARSEILLE (France)

Ֆրանսայի դրամական առաքումներու համար մեր Compte Chèque Postal Է H. N. Ghazarossian, 182, 53 Marseille

Արմենի'ր դուն
որ կը քնանաս, եւ
կանգնէ մեռելն,
ըէն, ու Քրիստոս
քեզի ըյս պիտի
տայ:
Եփես. Ե. 14

Քանզի ալ աս
կէ քիչ մը ատենէն
Ան որ գալու է՝
պիտի գայ ու պի-
տի ջաշանայ:

Ուրեմն ա'լ վախճանք, որ չըլլայ Թէ
Անոր հանգիստը մտնելու խոստմունքէն որ մեզի մնացելը է,
ձեզմէ մէկը զրկուած գտնուի: Երբ. Գ. 1

Երբ. Ժ. 37

ժԱ. ՏԱՐԻ

ՅՈՒԼԻՍ 1955

ԹԻԻ 7

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ԳԱՌՆՈՒԿԻՆ ՀԵՏԵՒԷԼ

ՅՈՎՀ. Ա. 35-44

Քերեւս ըլլան մարդիկ, որոնց համար Գառնուկին ճամբան (երբ անոր մասին լսեն) մեղկ եւ հեշտ կը հնչէ: Անոնք երբեք չեն երեւակայել թէ ի՞նչ դիւցազնականութիւն կը պահանջէ այն:

Ուշադրութիւն ընենք որ մեր բնաբանին սկիզբը Յիսուսի մասին Յովհ. Մկրտիչին խօսքն է, «Ահա Աստուծոյ Գառն» ու վերջը Յիսուսի ըսած խօսքն առ Փիլիպպոս «Իմ ետեւէս եկուր»: Ամբողջ քրիստոնէութիւնն ի մի բան այս երկու կարճ նախադասութեանց մէջ արտայայտուած է: Հաւատք առ Քրիստոս եւ Յիսուսի հետեւելու կեանքը: Երկրորդ կէտին սակայն պէտք է յօժար ըլլանք նման Անդրէասի որ Քրիստոսը զըտաւ:

Յիսուսի հետեւիլ երկու կողմեր ունի, Յիսուսի համար ըլլալ եւ Յիսուսի պէս ըլլալ: Մեր բնաբանին մէջ գտնուող երկու աշակերտները առաջին քայլը կ'առնեն: Անոնք Յիսուսի սիրոյն նոյնիսկ Յովհ. Մկրտիչը կը ձգեն: Հաւազոյնը միշտ թշնամին է լաւին: Նոյնիսկ Յովհաննէս յօժարութեամբ կը տանի այն երկրորդական դիրքը «Անիկա պէտք է որ մեծնայ քայց ես պզտիկնամ» (Յովհ. Գ. 30): Այս խօսքը մեզ շատ խօսելիք ունի: Յիսուսի հետեւէն երթալու կողք ոչ միայն մեղաւորներուն ու մոլութեանց ենթակայ եղողներուն եւ աշխարհի կորստածներուն, անցաւոր եւ ոչինչ բաներու մէջ խեղճութեամբ համար է, հապա նաեւ անոնց համար որոնք աշխարհի վրայ գտնուած ամենազեղեցիկին եւ ամենաազնիւին մէջ իրենց ուրախութիւնը կը փնտռեն:

Յիսուս Քրիստոսէ դուրս, անկէ վար սեւէ բանի մի կապուի:

Բարձրագոյն գեղարուեստը խոր տաւառորու-

թիւններ կրնայ ձգել, գեղեցիկ բնութիւնը կրնայ կրօնական զգացումներ արթնցնել. արժանաւոր եւ վերացուցիչ եկեղեցական ծիսակատարութիւններ կրնան պատկառանքի եւ պաշտամունքի տրամադիր վիճակներու հասցնել մարդս, քայց մենք ատկէ խիստ շատ բարձր բանի մը կանչուած ենք: Յիսուս կայնած է եւ կը կանչէ, «Իմ ետեւէս եկուր»:

Գոհ մի ըլլար ուրիշ բանով, պզտիկ բանով: Անոր կողմը անցիր լման եւ անվերապահ: Անիկա կրնայ զմեզ Սիմոնի նման նոր անունով մարդիկ կոչել, քանզի Անիկա զմեզ նոր ստեղծուածներ կ'ուզէ շինել Իր պատկերին համաձայն: Կարելի չէ չափել այն անսահման օրհնութիւնները որոնք կան այս կէտին մէջ մեզի համար եւ այն ամենուն որոնք մեզի հետ շփման մէջ են:

Այս նպատակին հասնելու ճամբան դիւրին չէ, դիւցազնութիւն կը պահանջէ, այսինքն անձնութեան: «Ինքզինքին յաղթելը ամենամեծ յաղթութիւնն է»: Նոյնպէս երբ Յիսուսի հետ լրջօրէն քալել կ'ուզենք, կուզայ խիստ դժուար եւ անխուսափելի պահեր, որոնք կ'ստիպեն զմեզ հրաժեշտ տալ այն մարդոց որոնց ընկերակցութիւնը մինչեւ հիմա մեզի հաճելի եւ սիրելի էր: Դիւցազնութիւն ամէն մարդու գործ չէ: Հին մարդու մեռնիլ կամ աշխարհէ հրաժարիլ աւելի եւս ամէն մարդու գործ չէ:

Յիսուսի հետեւիլ կը նշանակէ Անոր պէս ապրիլ: Հոս ահա կ'սկսի տեղի ունենալ դիւցազնութիւնը, որ ոմանց համար իբր զգացական եւ մեղկ կ'երեւի (եւ թերեւ երբեմն ալ այնպէս է)՝ Գառնուկին բնութիւնը իր վրայ կրել, Գառնուկին ճամբան քալել, ըսել է թէ Յիսուսի աշակերտը իր Տէրոջը հետեւելու պահուն պէտք է

յօժար ըլլայ Գառնուկին պատահելիք բաներուն ալ դիմանալու:

Աստուծոյ Գառնին Հարչարանաց մէկ երեւոյթը, որ ամենապզտիկը չէ երբեք, այս է որ Իր վրայ եւ Իրեն հանդէպ մարդոց մեղքը անյուր կատաղութիւնով յարձակեցաւ: Ամէն ինչ որ «մարդկային չարութիւն» «ամբարշտութիւն» բառին տակ կարելի է մտածել կամ երեւակայել, իր ամենէն բիրտ երեւութիւնը Հարչարանաց շաբթուն մէջ յայտնի եղաւ: Անիկա սակաւն այս ամէնը կրեց յօժարութեամբ եւ լոկն բնականաբար խոր վիշտով մը, այնպէս որ մարդիկ Անոր վրայով դայթակղեցան: Բայց կրեց այն վստահութիւնով թէ իր անմեղութեան Հարչարանքը ուրիշներու համար յարութիւն պիտի ըլլայ, քանզի անոնք սարսափած այս տեսարանէն իրենց կուրծքերը պիտի ծեծէին եւ ետ պիտի դառնային դէպի այն խաչը: Ու այս պիտի տեսէր բոլոր ժամանակաց համար: Այս, Հարչարանաց երկրորդ երեւոյթն է:

Աշխարհ կը կարօտի այնպիսի մարդոց, որոնք Գառնուկին բնութիւնը կը հասկնան, եւ որոնք նաեւ Գառնուկին ճամբէն եւ Անոր պատահարներէն չեն սոսկար:

Դիւրին չէ մարդկային մեղքերու ալիքներուն մեր վրայ խուժելը տեսնել, դիւրին չէ մարդկային չարութեան մոլուցքը մեր վրայ պայթեցնել տալ: «Հոս է սուրբերուն համբերութիւնն ու հաւատքը»: Այս հայեցակէտով միայն կարելի է դիմանալ: Բայց այսպիսի մարդոցմէ է որ փերկարար ազգեցութիւն կը տարածուի: Մարդիկ կան որ անոնց լուս համբերութիւնը «տկար» բառով կը պիտակեն, ու յարմար առիթ գտած կը սեպեն զանոնք այգանելու եւ նախատելու: Ուրիշներու համար սակայն այդ սուրբերու համբերատար վերաբերումը անսասան ապացոյց մըն է հոգիի մեծութեան եւ ծածկուած փառաւորութեան: Անոնք կ'ամչնան եւ կ'ապաշխարեն այս կեանքերուն առջեւ եւ չեն գայթակղիր անոնցմէ, հապա ապաշխարութեան եւ կիսանքի կը հասնին:

Այս բանը գործնականօրէն կը տեսնուի թերեւս այն զրածան տեսարանիչներու կեանքին մէջ, որոնք անաստուած քաղաքի մը մէկ ինկած թաղամասին կամ մոլեռանդ կաթողիկ շէրջանակի մը մէջ զործելու կը յանդգնին եւ հաւածանքներու եւ նախաախնքներու կ'ենթարկուին: Զայս կ'ընէ այն հաւատացեալ թուրքը զոր կը ճանչնանք, որ համբերութեամբ եւ միշտ նոյն սիրալիր դէմքով ու վերաբերութեամբ թոյլ տը-

լաւ որ զինքը զետին նետեն եւ ոտնակոխ ընեն. եւ հրաժարեցաւ ոեւէ օրինական ճամբով ձեռք բերելիք պաշտպանութենէն եւ ցոյց տուաւ վերջապէս իր կենդանի վկայութեամբ իր հակառակորդին թէ Քրիստոս եւ Իր Հոգին ինչպէս կրնան փոխել մարդս, եւ այսպէս զայն այս կերպով զարմացումի եւ ամաչումի մատնելով, պատենութիւն տայ մտածելու լրջօրէն աստուածային այդ ուժին վրայ, որմէ ինք բոլորովին անտեղեակ է: Նոյնպէս պատահած է որ երբեմն արքեպոստոլ կամ անառակ մարդու մը համբերատար կինը երկար տարիներու զոհաբերութենէ մը յետոյ գործիքն ըլլայ մարդկային սրտի վրայ տարուելիք յաղթութեան:

Պէտք է շատնան այն քրիստոնեաներու խումբերը, որոնք Քրիստոսի հետեւելու կեանքին մէջ մինչեւ այն կէտին զան, որ յօժար ու կամաւոր Գառնուկին հետեւին՝ նաեւ խաչին ճամբուն վերայ:

Զըլլայ թէ Յիսուսի հետեւեալ այդ առանձնաշնորհին մէջ դադարինք հոն, ուր կը սկսի վճռական եւ լուրջ վայրկեանը:

Սակայն աւելի պաշտամունք Անոր որ իբր Աստուծոյ Գառն համբերեց եւ «մինչեւ մահուան հնազանդ եղաւ ու այն ալ խաչին մահուանը»:

ՏՐ. Փ. ՊԷՌՕՆ

ՀՈԳԵՒՈՐ ԿԵԱՆՔ

ԲԱՆԱՔԻՆ ԴՈՆԵՐԸ

(J. Stuart Holden)

○○○○○○○○○○

Արեւելեան կողմէն երեք դուռ, ու հիւսիսային կողմէն երեք դուռ, եւ հարաւային կողմէն երեք դուռ, ու արեւմտեան կողմէն երեք դուռ:

Յայտ. ԻԱ. 13

Սուրբ քաղաքին նկարագրութիւնը Յայտնութեան գրքին մէջ՝ կը պատկերացնէ մեր աչքերուն առջեւ այն կատարեալ հաղորդակցութիւնը զոր պիտի ունենանք Աստուծոյ հետ: Կը ցուցնէ թէ այդ հաղորդակցութեան պայմանը Գառնուկին արեամբ լուացուած ըլլալն է եւ յատկանիշներն են լոյս, հնազանդութիւն, ուրախութիւն, կատարեալ գոհացում եւ ծառայութիւն: Եւ մինչ երկինքը այդ հաղորդակցութեան յոյսին թագադրավայրն է, աշխարհի վրայ ալ կարելի է

Տէրոջը հետ հաղորդակցութեան մէջ գտնուիլ ու այս անհրաժեշտ է ամէն մէկ քրիստոնեայի համար: Երբ մեր աչքերը այն սուրբ քաղաքին վերայ սեւեռած զայն կը դիտենք, կը տեսնենք թէ անոր ճարտարապետական ամէն մէկ մասնամասնութիւնը եւ կարգադրութիւնը նշանակութեամբ լեցուն է: Անոր քառակուսի շրջապատը, զոր օրինակ, կը պատկերացնէ կատարելապէս համաչափ կեանք մը, որուն մէջ երկայնութիւն, լայնութիւն եւ բարձրութիւն հաւասար են: Արեւի ու լուսնի պէտք չըլլար, վասնզի Աստուծոյ փառքը զանիկա կը լուսաւորէ եւ անոր ճրագը Գառնուկն է: Անոր բնակիչները ոչ կ'անօթինան, ոչ կը ծարաւին, ոլլ կատարեալ յագեցում գտած են Տէրոջը շնորհքին ու բարութեանը մէջ: Անոր զետը անընդհատ պաղաքեցութիւն կը պատճառէ ուրիշ որ կ'անցնի: Այս ամէնը յանկուցիչ պատկեր մը կը ներկայացնեն այն հաղորդակցութեան որուն կանչուած ենք Աւետարանին միջոցով:

Սակայն քաղաքին ղռներն են որ մասնաւորապէս կը շարժեն Առաքեալին ուշադրութիւնը: Քաղաքը թէպէտեւ պարիսպով պատած է մուտքը արգիլելու համար, սակայն միւս կողմէն՝ պարիսպներուն մէջ կը գտնուին ղռներ, որոնք ներս ընդունելու պատրաստ են: 12 ղռներ կան 12 ցեղերուն անուններով: Ի՞նչ յուսադրիչ իրողութիւն, երբ կը մտաբերենք ցեղերէն ուսանց բարոյական պատմութիւնը: Իւրաքանչիւր ղռն ամբողջ մարդարիտ մը կը ներկայացնէ եւ իրեն յատուկ պահապան հրեշտակն ունի: Բոլոր ղռներն ալ շարունակ բաց են ու ամէն կողմի վրայ հաւասար քանակութեամբ, որպէսզի ամբողջ աշխարհ տեսնէ: Այս ամէնը կը ցուցնեն Աստուծոյ առատ շնորհքը, թէ Անիկա կը հետաքրքրուի իւրաքանչիւր անհատով եւ առանց աչառութեան միջոցներ պատրաստած է իւրաքանչիւրին պիտոյքին գոհացում տալու եւ զահին վրայ նստող ամէն մէկ անհատի կ'ուղղէ իր հրաւէրը՝ երբ «Եկուր» կ'ըսէ: Քաղաքին չորս կողմերը գտնուած երեքական ղռները կը ցուցնեն թէ մարդոց Աստուծոյ հետ ունենալիք հաղորդակցութիւնը ձրի է ամէն մարդու եւ քաղաքը ինքնին այնքան ընդարձակ որ ամէն տեսակ Աստուծոյ զաւակ հոն կրնայ տեղ գտնել. թէ ամէն անոր մօտեցողը միեւնոյն կաղապարէն անցնելու չէ, թէ իւրաքանչիւր անհատ իր ճամբայով մեղքի դարձած է, եւ ուստի իր ուրոյն կերպովը Աստուծոյ դառնալու է: 12 ղռները կը յայտարարեն թէ Աստուծոյ շնորհքը ընդհանրական է. իր ձրի հրաւէրը կ'ուղ-

ղէ ամէն տեսակ խառնուածքի տէր ու ամէն կերպ պայմաններու տակ գտնուող է. ամէն տեսակ խնդիրներով շահագրգռուող անհատներու:

Տէրոջը համար կը կարգանք թէ «Ամէն կողմէն» մարդիկ իրեն կուգային վստահելով թէ սիրով պիտի ընդունուէին: 12 ղռները ճիշդ այդ վստահութիւնը կը ներշնչեն մեզի: Չար թէ բարի կը հրաւիրուին իրեն մօտենալու: Ամէն ալ իր սիրոյն առարկաներն են: 12 ցեղերէն ամէնն ալ շարունակ հաւատարիմ չգտնուեցան Աստուծոյ հանդէպ: Ցեղերէն ուսանց վարկը որչա՛փ կոտորած էր, սակայն իւրաքանչիւր մարգարիտեայ ղռն ցեղի մը անունը կը կրէր: Ուրեմն Աստուծոյ հետ անձնական շփման դալու համար սպասելու չէ՞ք որ նախ ուրիշի մը տեսութեանը կամ փորձառութեանը մասնակից ըլլանք: Անհատ մը ուր որ ալ գտնուի, բարոյական ինչ միջավայրի մէջ ալ ուր ըլլայ, երբ իր երեսը լոյսին դարձնէ եւ խաւարը ետին թողած դէպի լոյսը յառաջանայ, պիտի հասնի քաղաքին ղռներէն մէկին: Եւ ինչպէս որ լոյսի իւրաքանչիւր ճառագայթ մեզ իրեն ծնունդ տուող արեգակին կ'առաջնորդէ, նոյնպէս ալ քաղաքին իւրաքանչիւր ղռնը կ'առաջնորդէ անոր կեդրոնը գտնուող զահին: Որչա՛փ պիտի օրհնուէինք, եթէ մենք ամէն ալ, փորձառու կամ մանուկ քրիստոնեաներ, հասկնայինք այս ղռներուն աւանդած դասը: Ասով չ'յանդիմանուի՝ այն նեղ տեսութիւնը որ Աստուծոյ շնորհքին մէջ շատ աւելի արտաքսում կը տեսնէ քան ներփակում: Ի՞նչ պիտի ըսեն անոնք որ Սուրբ քաղաքին մէջ ղռներ չեն տեսներ, այլ պարիսպներ միայն, կամ թէ մէկ ղռն մը միայն որմէ իրենք մտած են: Այս խորհուրդը մեզմէ չ'խնդրեր որ ճանչնանք եւ ընդունինք թէ քրիստոնէական կեանքը բազմակողմանի է եւ անոր մէջ զանազանութիւններ կան, քանի որ ամէն դասակարգէ մարդիկ եւ ամէն տեսակ միտքեր պիտի միանան Տէրոջը քաղաքին մէջ. մարդիկ՝ զոր ինք ստեղծած է եւ ինք փրկած է: Վստահ եմ թէ, երբ օր մը մեր այս տեսիլքը փառաւորապէս իրականանայ ու Աստուծոյ զերազանց շնորհքով՝ Գառնուկին արեւմտ լուացուած՝ այն քաղաքը մտնենք, երկինքի մէջ մեզի սպասող բազմաթիւ անակնկալներէն մէկը պիտի ըլլայ գտնել թէ այս կամ այն ղռնը, որ կարգ մը քրիստոնեաներէն չէր վաւերացուեր, ներս ընդունած է մարդիկ, որոնց մասին կասկածներ կը տածէինք: Աստուծոյ ընտանիքը փոքրիկ ընտանիք մը չէ եւ Անոր սէրը մարդուն միտքէն շատ աւելի մեծ է:

Սակայն դռներուն դասը այս ընդհանուր ներկատուններէն շատ աւելի ճշմարտութիւններ կը պարունակէ: Արեւելք, Հիւսիս, Հարաւ, Արեւմուտ՝ միմիայն աշխարհագրական ոճեր չեն: Անոնք կը ներկայացնեն կեանքի բարոյական քարտէսը եւ կը ցուցնեն թէ ինչպէս միջավայրը կ'ազդէ եւ կը բացատրէ մարդոց դիրքը առ Աստուած եւ առ Անոր խօսքը: Զկայ մէկը, երիտասարդ կամ ծեր, քրիստոնեայ կամ ոչ քրիստոնեայ, նուիրուած կամ չնուիրուած, զոհ կամ դժգոհ, որուն համար անձնական նշանակութիւն մը չունենայ այդ դռներուն բինակը:

Առնենք երեք Արեւելեան դռները: Արեւելքը այն կողմն է ուրկէ արեւը կը ծագի, նոր օրը կը սկսի եւ լոյսը կը ծնի: Հետեւաբար կրնանք ըսել թէ այս դռներէն ներս մտնողները՝ երիտասարդութեան մէջ Քրիստոսը փնտռողները կը ներկայացնեն: Անանկներ, որ իրենց անխառն ուժերը ի սպաս կը դնեն այն Փրկչին, զոր սորվեցան սիրել: Արեւելեան դրան առաջնորդող շաւիղները հարթ ու ծաղկազարդ են: Անկէ մտնողները անծանօթ են ջախջախուած խռչալներու, կոտորուած ուխտերու, կիզիչ խղճախայթերու: Երիտասարդ Տիմոթէոս այս դռէն մտաւ: Սակայն թէ՛ Տիմոթէոս եւ թէ՛ անոր նման երիտասարդութեան օրերուն Տէրոջը եկողներ պէտք է գան որոշ, անձնական, կշռող, անդառնալի շարժումով մը:

Անցնինք հիւսիսային դռներուն: Հիւսիսային կողմը այն կողմն է ուսկից ձմրան հովերը կը փչեն Արջային ովկէանոսին վրայ: Այս դռներէն մտնողներն են անոնք, որ անցած են հակառակութիւններէ, տրտմութիւններէ եւ յուսախաբութիւններէ, որոնց սրտերը կոտրած ու կեանքերը ճգմուած ըլլալով՝ պաղ ու տխուր եւ աննպատակ կ'երեւնան, որոնք ծանօթ են ինքնաճանաչման դառն ժամերու, ամօթի ու խղճի խայթերու, որ հետեւած են իրենց զործած մեղքերուն եւ որոնց կեանքին մէջէն կը փչէ շարունակ դատապարտութեան ցուրտ հովը: Փա՛ռք Աստուծոյ որ Հիւսիսային կողմը երեք դռներ կան ուր մարդիկ կրնան ապաստանիլ ցուրտ հովերէն:

Անցեալ օր հանդիպեցայ մէկին որ Հիւսիսային դռէն մտաւ: Իրեն ըսուած էր թէ մեծ զործողութենէ մը անցնելու էր եւ հաքիւրէն երեք միայն յոյս կար թէ պիտի աղէկնար: Վախէ մղուած իմ ներկայութեանս մտաւ այդ դռէն:

Կիրակի իրիկուն քարոզէ մը յետոյ՝ հիւսիս-դապահոհի մը քովս եկաւ խորապէս յուզուած եւ դառնապէս լալով: Մեր իօսակցութեան միջոցին հանեց իր երկայն ձեռնոցներէն մին եւ

ափը բանալով ինծի ցոյց տուաւ երեք փոքրիկ ճերմակ դեղահատեր ու ըսաւ, «Եթէ ներքին մը՝ դու մը գիտայս եկեղեցին առաջնորդած չըլլար, այս գիշեր պիտի կլլէի այս դեղահատերը»: Անիկա ալ Հիւսիսային դռէն մտաւ:

Այս դռը բորտներու, սյախքն մեղաւորներու համար է: Անանկներու համար որ ձանձրացած են մեղքէ ու անմաքութենէ, որոնք չեն կրնար խաղաղութեամբ քնանալ ու Աստուծոյ հովերէն կը տարուբերուին եւ դժոխքի ցաւերը զանոնք կը պատեն: Փա՛ռք Աստուծոյ որ Հիւսիսային դռը միշտ բաց է եւ ներսէն ձայն մը կը լսուի որ «Եկուր» կ'ըսէ:

Հիւսիսային դռները կը կենան նաեւ անոնց համար որոնք տարակոյսի եւ անհաւատութեան ցուրտ հովերուն խաղալիք դարձած են: Ամէն տարակոյս մեղք չէ: Կան մարդիկ, նամանաւանդ ներկայիս երիտասարդներ, որ չեն կրնար հարցումներ չընել: «Եկէք, վիճարանինք», կը կարգանք Տէրոջը խօսքին մէջ: Փա՛ռք Աստուծոյ որ տարակուսողներու համար դռներ կան. այնպիսիներու համար՝ որ չեն կրնար իրենց անձերուն վստահիլ ու Աստուծոյ խօսքին մէջ գտնուած կարգ մը կէտերու շուրջ տարակոյսներ ունին: Վստահ եմ թէ թովմաս այս դռէն մտաւ: Տէր Յիսուս այնպիսիներն ալ կը կանչէ եւ անոնց մտաւոր ուժերը Իր արեամբ մաքրելով, Իր իմաստութեամբ ուղղելով, Իր աստուածային զօրութեամբ մէջ անոնց տեղ կ'ուտայ:

Գանք Հարաւային դռներուն: Հարաւային կողմէն կ'ստանանք հաճելի տաքութիւն եւ լոյս: Այս դռէն կը մտնեն զգայնիկ խառնուածքով մարդիկ, որոնց տաք զգացումը զանոնք Յիսուսի կը մղէ: Զգացումներ՝ որոնք միշտ առարկայ մը կամ անձ մը կը փնտռեն իրենց սէրն ու զուրգուրանքը արտայայտելու: Ինծի կուգայ թէ Պօղոս մտաւ հարաւային դռէն ու յաւիտենական զոհացում գտաւ իր բուն զգացումները կեդրոնացնելով սուրբ քաղաքին, Տէրոջը եւ Անոր երջանիկ ծառայութեան վրայ: Դէն որ դոհացում կը փնտռես քեզի յատուկ խաճառածքիդ, ո՛րը կրնայ գոհանալ միայն այն բաներով որ բարի, գեղեցիկ, սիրուն եւ մաքուր են, Յիսուս Քրիստոս Քեզ դէպի հարաւային դռը կը կանչէ ու շէմին վրայ կեցած քեզ ողջադուբերու կ'սպասէ:

Վերջապէս կը հասնինք Արեւմտեան դռներուն: Աւելորդ է ըսել թէ Արեւմուտքը այն կողմն է ուր Արեւը մարը կը մտնէ եւ լոյսը կը մահանայ: Մարը մտնող արեգակը դիտելով ա-

նոր պղնձագոյն պայծառութեան մէջ կը տեսնես բան մը որ անցած է ու կը յիշես կեանքի վաղանցիկութիւնը եւ Անոր յաւիտեական ծրագիրը: Ուրեմն Արեւմտեան դռները կը ներկայացնեն աշխարհէն ձանձրացողներուն մուտքը: Մարդիկ աշխարհէն յոգնած ըլլալուն համար անպատճառ տարիքներն առած ըլլալու չեն: Ճիշդ այդպէս յոգնածներն են զոր Քրիստոս կը հրաւիրէ որպէսզի Իրեն մէջ գտնեն հանգիստ, կորով ու հոգիի գոհացում: Սակայն այս դռները կը կենան նաեւ անոնց համար որոնք գրեթէ վերջացուցած են իրենց կեանքի գործը, որոնց համար աշխարհի ուրախութիւնները ու փառքը սկսած են աղօտանալ եւ վերջալոյսի հորիզոնէն անդին գտնուած փառքէն կը հրապուրուին: Այս դռներէն կը մտնեն երազողները, ըլլան անոնք երիտասարդ թէ ծեր, երիտասարդները՝ ապագայի, ծերերը անցեալի երազներով: Ինծի կուգայ թէ Նաթանայէլ եւ Յովհաննէս այս դռնէն մտնելով գտան թէ այն փառքը զոր վայելեցին Յիսուս Քրիստոսի հետ հաղորդակցելով, բոլորովին կը գերազանցէր իրենց նախկին երազները:

Ուրեմն ի՞նչ կը սորվեցնէ մեզի դռներուն այս առակը: Կը սորվեցնէ թէ Աստուծոյ քաղաքին մէջ եւ Քրիստոս Յիսուսի միջոցով Անոր հետ ունեցած մեր հաղորդակցութեան մէջ կրնանք ամէնքս ալ մեր կարօտութեանց յագեցում եւ չարտասանուած յոյսերուն իրագործումը գտնել:

Երիտասարդներ, որ չեն համարձակիր իրենց երազներուն մասին արտայայտուիլ, կը գտնեն իրենց կեանքի գործը: Ծերեր, որ կ'երազեն իրենց անցուցած անդամնալի օրերուն վրայ, նոր գոհացումով մը կը տոգորուին: Զօրաւորներ եւ մահաւոր եռանդէ մը մղուողներ կը գտնեն նւազատակ մը որ կը պահանջէ իրենց ամբողջ ոյժը, բոլոր ձիւքերը և ամբողջ կեանքը: Երկչոտներ կը գտնեն քաջալերութիւն եւ ոյժ ու սրբաբան մը Յիսուս Քրիստոսի մէջ: Երկբայողներ և տարակուսողներ՝ պայծառ լոյս եւ ամէն տարիքի վերաբերող ու ամէն պարագայի տակ գտնուող յոգնածներ մշտնջենական հանգիստ Յաւիտեական սիրոյն կուրծքին վրայ:

Քեզի մօտ, շատ մօտ, շնչառութենէդ, ձեռքերէդ ու ոտքերէդ աւելի մօտ դուռ մը կայ որ Աստուծոյ քաղաքին կ'առաջնորդէ: Կրնաս մտնել քեզի ամենէն մօտ գտնուող դռնէն: Մտիկ մի ընէր այս կամ այն աստուածաբանական պահանջներուն կամ մարդկային փորձառութեանց: Տէրոջը պայմանները խիստ պարզ են: Անհաւկնալի բաներ չխնդրէր քեզմէ: Կ'ակնկա-

լէ միայն որ դուն սիրտդ, սէրդ, հաւատքդ ու վստահութիւնդ նուիրես Իրեն, որ նոյնն է երէկ, այսօր ու յաւիտեան: 12 դռները կը ներկայացնեն Աստուծոյ սիրոյն լայնութիւնը, որոնցմէ իւրաքանչիւրը ուրոյն մարգարիտ մը, այն պատուական մարգարիտը Յիսուս ինքն է:

ՍՈՒՐԲ ՕԳՈՍՏԻՆՈՍԻ ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ



ԳԻՐԲ Ե. ԳԼՈՒԽ 8

Հակառակ իր մօրը կամքին Հռովմ կ'երթայ:

...Սակայն ինչո՞ւ այս տեղէն ելլել հոն երթալու համար: Աստուած իմ, Դուն գիտէիր առանց սակայն յայտնելու ինծի, առանց սորվեցնելու մօրս, որուն սիրտը պատուեցաւ իմ մեկնումովս, եւ որ ինծի հետեւեցաւ մինչեւ ծովը: Ուժով մը կը կառչէր ինծի, զիս ես բռնելու կամ ինծի հետեւելու համար. եւ ես կը խաբէի զայն չյայտնելով ուրիշ ծրագիր, քան ընկերակցելու բարեկամի մը որ պատրաստ է առաջատու բանալու առաջին պատասխանի հովին: Եւ ստեղծ մօրս, ու որպիսի՜ մօր մը, ու փախայ: Քու ողորմութեանդ մէջ ներեցիր ինծի: Ստորինս եւ կեղծս, Դուն պահեցիր ծովուն ջուրերէն հացընելու համար Քու շնորհացդ ջուրերուն որոնք զիս մաքրելով պիտի չորցնէին այն արտասուաց հեղեղները, որոնցմով մայրս կը նշանակէր այն տեղերը, ուր ամէն օր կը հոսեցնէր իր աղօթքը ինծի համար: Եւ քանի որ կը մերժէր ետ դառնալ (ծովեզերքէն) առանց ինծի, համոզեցի զինքը — ո՛չ առանց շատ յոգնութեան, որ գիշերը նաէն քիչ հեռու գտնուող Սբ. Կիպրիանոսի նուիրուած տաճարին մէջ անցնէ: Այդ գիշերն իսկ գաղտնաբար մեկնեցայ ես եւ նէ մնաց աղօթելու եւ լալու համար: Եւ այդքան արցունքով Քեզմէ ի՞նչ կը խնդրէր ով Աստուած, որ թոյլ չտայիր իմ այս ճամբորդութիւնս: Բայց Դուն, Քու խորհուրդներուդ բարձրութեան մէջ, դպչելով իր տենչանքներուն էն կենդանի զապանակին, նկատի չառիր իր մէկ օրուան աղօթքը, իր ամենօրեայ աղօթքին համեմատ ընելու ինծի:

Հովը փչեց եւ ուռեցուց մեր առաքաւտները ու ծովեզերքը հեռացուց մեր տեսութենէն: Առաւօտուն մայրս ծովամիւր եկաւ ու ցաւէն խելա-

կորոյս, իր ճիշերովն ու գանգատներովը լեցուց Բու ահանջող անողութ ասյա յուսահատութեան առջեւ: Եւ Դուն իմ կիրքերուն միջոցաւ կը քշէիր զիս հոն՝ ուր վերջ պիտի տայի անոնց, եւ Քու արդարութիւնդ իր տառապանաց խարազանովը կը վիրաւորէր մօրս մարմնաւոր դուրգութեանքը: Նէ կը սիրէր իմ ներկայութիւնս իր մօտ իբր մայր, եւ ուրիշ շատ մը մայրերէ աւելի եւ չէր գիտեր այն բոլոր ուրախութիւնը որ Դուն իրեն կը պատրաստէիր իմ ասյա բացակայութիւնովս: Զէր զիտեր, հետեւաբար ալ ասյա արտասուք ներն ու հեծկլտութիւնք, ասյա տագնապներն որոնք Եւայի յանցապարտ ժառանգութեան մնացորդը ըլլալը կը մատնէին: Նէ արտասուքով կը փնտռէր ինչ որ արտասուքով ծնած էր: Սակայն իմ կեղծաւորութեանս եւ անգլթութեանս վրայ գանտատելէ յետոյ, վերակաւ աղօթել ինծի համար եւ իր տունը վերադարձաւ մինչ ես կը նաւէի դէպի Հոովմ:

ԳԼՈՒԽ ԺԳ.

Միւսն կ'երթայ ճարտասանութիւն ուսուցանելու.
Սուրբ Ամբրոսիոս

Միւսն, Հոովմի կառավարիչէն ճարտասանութեան ուսուցիչ մը ուղած էր այդ քաղաքին համար, եւ նոյնիսկ յանձն կ'առնէր ճամբու ծախքը վճարելու: Եւ ես խնդրեցի այդ գործը, Մանիքեցոց բոլոր սխալներէն յափշտակուած պարտուած բարեկամներէ, սխալներ, որոնցմէ պիտի ազատէր զիս այս մեկնումս, առանց անոնց կամ իմ գիտնալուս: Ինծի առաջարկուած նիւթ մը, պերճախօսութիւնս ճաշակել տուաւ Սիմմաք կառավարիչին որ զրկեց զիս:

Միւսնի մէջ գացի գտայ Ամբրոսիոս եպիսկոպոսը որ ամենուրեք ճանչցուած էր իբր աշխարհի ամենամեծ հոգիներէն մին, եւ իբր Քու բարեպաշտ ծառայ:

Այն օրերուն իր պարճախօս եռանդը ժողովուրդիդ կը բաշխէր Քու ցորենիդ գոտի հիւթը, Քու Իւղիդ ուրախութիւնը եւ Քու զինիիդ զգաստ դորձածութիւնը: Կոյր էի, բայց Քու ձեռքդ զիս անոր կը տանէր որպէսզի զիս Քեզի բերէր բացուած աչքերով: Այս Աստուծոյ մարդը զիս հօր մը պէս ընդունեց, եւ իմ ժամանմանս համար եպիսկոպոսական սիրով մը ուրախացաւ:

Եւ ես ալ զայն սիրել սկսայ, ոչ իբր ճշմարտութեան վարդապետ, (զոր Քու եկեղեցիիդ մէջ

գտնելու բոլոր յոյսերս կորսնցուծած էի) այլ ինծի հանդէպ բարեացակամ մարդն էր որ կը սիրէի իր մէջ: Կը յաճախէի իր ընդհանրական ուսուցումներուն, ո'չ թէ շահուած ըլլալուս, այլ վստահ ըլլալու թէ իր պերճախօսութեան հոսանքը համապատասխան էր իր անուան, եւ թէ իր համբաւը չէր չափազանցած կամ նեղցուցած անոր ընթացքը: Եւ կախուած կը մնայի իր խօսածին ձեւին, անհոգ ու անտարբեր իմաստին, ու կը շփանայի իր ճառերուն քաղցրութենէն, որոնք աւելի գիտական, ու նուազ հմայիչ եւ հրապուրիչ էին քան Ֆոսթիւսինը(1):

Զայս կ'ըսեմ սակայն ճարտասանական տեսակէտէն, իմաստին մէջ չկար ոեւէ բաղդատութիւն: Մին կը կորսուէր Մանէսի սուտերուն մէջ, միւսը կը սորվեցնէր փրկութեան առողջ վարդապետութիւնը: Բայց փրկութիւնը հեռու է ինծի պէս մեղաւորէն, որու սակայն հետզհետէ կը մօտենայի առանց գիտնալու:

Քաղուածաբար

Զ. Բ. ՊՈԻՏԱՐԵԱՆ

Փարիզ

(1) Ֆոսթիւս Մանիքեցի մեծ հոգեւոր, որմէ սակայն յուսախաբ եղաւ Օգոստինոս, մինչ իր մէջ կը վնտուէր լոյս եւ ճշմարտութիւն:

ՇՆՈՐՀԱՅ ԾՈՎԷՆ

ՔՐԻՍՏՈՍԻ ԱՐԵԱՆ ԶՕՐՈՒԹԻՒՆԸ ԻՄ ՎՐԱՍ

Հոով. Ե. 8-11

Հոով. Ը. 28, 35, 37

Եհովա առաջնորդէ զիս

Զի պանդուխտ եմ ու կարօտ,

Շատ տկար եմ, զօրացուր զիս

Ամենակարող ձեռքովդ:

Ծնած եմ Արաբկիր (Թուրքիա): Մանկութիւնըս Խարբերդի Գերմանական որբանոցներէն էմ մաւուսի մէջ անցնելէն վերջ, 1922ին Պէյրութ փոխադրուեցանք Ամերիկեան հաստատութեանց հետ: Ժամանակ մը Պէյրութի գոլէճը մնալէ յետոյ, զիս զրկեցին իբրեւ հիւանդապահուհի Պէյրութի սանաթօրիւմը, ուր թոքախտէ վարակուած

հիւանդներու մէջ կը ծառայէր: Գրեթէ երեք տարի շարունակ նոյն տեղը մնալէս յետոյ, Ֆրանսա գտնուող եղբայրներուս առաջարկին վրայ Ֆրանսա եկայ եւ հաստատուեցայ Մարսէլէն մէկ ժամ հեռու Լա Սիօթա գիւղաքաղաքը: Հոն շատ հանգիստ ըլլալուն հետ մէկտեղ շարունակ մըտքիս մէջ էր Պէյրութի նախանձելի գործս: Դալէս մէկ օր առաջ հիւանդանոցի տնօրէնը շատ խնդրեց ինծմէ որ այդ գործս չձգեմ, առարկելով նաեւ թէ մօտ ժամանակէն պիտի անցնէի աւելի լաւ եւ միեւնոյն ատեն պատասխանատու գործի մը վրայ հիւանդանոցին մէջ: Պաշտօնակիցներս եւ նոյնիսկ հիւանդները շատ յուզուած էին այսպիսի բաժանմանս համար: Դեռ չորս տարի յետոյ իսկ անոնցմէ շարունակ կարօտի նամակներ կը ստանայի: Ֆրանսա դալս 1929 Նոյեմբերին եղաւ, որմէ յետոյ 1932ին Տէրովը առաջնորդութեամբ ամուսնացայ նոյնպէս Գերմանական որբանոցէն (ճանչցուած) երիտասարդի մը հետ: Թէեւ ես կաթոլիկ կրօնքին կը պատկանէի, բայց ամուսնոյս առաջարկին վրայ, քիչ մըն ալ դժուարահաճ կերպով, բողոքական պատկառութիւն տեղի ունեցաւ, ինչու որ ամուսինս Սամուէլ Բրուտեան բողոքական ծնողքի զաւակ էր:

Դեռ մինչեւ այն ժամանակ թէեւ շատ մը ժողովներու ներկայ եղած էի եւ որբանոցը եղած ժամանակաւ շարունակ կը լսէի Աւետարանի ճշմարիտ յորդորները ապաշխարութեան եւ Աստուծոյ թաղանթութեան վրայով, բայց շարունակական ըլլալուն համար այլեւս ինծի շուրջ ձայնի պէս կուգար: Ամուսնութեանս ճիշդ ամուսնի մէջ 1933 Յունուար 10ին պզտիկ բայց ինծմէ մեծ սղջալոյս մեռաւ: Իր երկարատեւ հիւանդութեան ընթացքին յաճախ կը մտածէի թէ եթէ կայ երկինք եւ գոթիք, եղբայրս որ մահուան մօտ կ'երեւէր, ո՞ր պիտի երթար: Ես մնացի այս հարցումներուն մէջ լուսկեաց եւ միշտ խոհուն, մի քանի անգամ կրկնեցի ամուսնոյս ըսելով, Սամուէլ, եղբայրս Յարութիւնը ո՞ր պիտի երթայ մեռնելէն յետոյ: Բայց ամուսինս ալ անապաշխար ըլլալով լուռ կը մնար: Քանի անգամներ Լա Սիօթայի Քարոզիչը այցելած էր եղբօրս եւ լուրջ յորդորած էր որ զէթ հոգի մը կորուստէն Քրիստոսի կենդանութեան առաջնորդէ, բայց անօգուտ: Վերջապէս Տէրը սկսած էր միջոցներ գործածելով զիս եւ ամուսինս տունով Քրիստոս Յիսուսի խաչին փրկութեանը առաջնորդել: Փառք, հազար անգամ փառք Աստուծոյ որ այս «քանչիւի շնորհքին արժանացուց մեզ: Ժամանակ մը թէ ես եւ թէ ամուսինս սկսած էինք

լուրջ մտածել, բայց ես կ'սպասէի որ առաջ ինք ապաշխարէր եւ յետոյ ես: Այս արթնութիւնը պատճառն էր այն այցելութեանց եւ յարատեւ աղօթքներուն որ եղաւ նախ տեղւոյն քարոզիչ Սամուէլ Պազգալեանի ու յաճախ եղբայրներու այցելութիւններով. նաեւ Փրօֆ. Խայրկեանի, մի քանի անգամ Վեր. Յ. Ղազարոսեանի, որ մեզ պատկած էր, նաեւ Մարսէլի եղբայրներէն քանիներ յաճախ կ'այցելէին մեծ յուսով մեր ապաշխարութեան, բայց ես դեռ Սատանայի որոշ գերի մըն էի, նոյնպէս էր նաեւ ամուսինս: 1933ին Տէրը զիս երեք ամիս հիւանդ պառկեցուց: Դեկտեմբերին հազիւ քիչ մը լուցած էի, Տէրը «հեղի շնորհեց փոքրիկ մը, թէեւ ամուսինս կ'ուզէր հայ կարիճներու զոյգ անունները դնել, որովհետեւ մոլեռանդ դաշնակցական մըն էր, բայց ինչպէս եղաւ միտքը փոխեց եւ Բենիամին դրաւ: Ես այս կէտին մէջ ալ նկատեցի թէ ամուսինս սկսած է լուրջ մտածողութեամբ յաճախ Ս. Գիրք կարդալ եւ փոփոխութիւններ կըրել. շատ չէի հաւատար, բայց սրտանց կ'ուզէի որ այս նպատակը շուտ յաջողուէր: Մեր փոքրիկ Բենիամինը 12 օր յետոյ սեւ հոգին յանձնեցինք, 1934 Յունի. 10ին, նոյն օրը որ տարի մը առաջ եղբայրս մեռած էր: Այն իրիկունը որ վերջին օրն էր, Մարսէլէն Վեր. Յ. Ղազարոսեանը կանչեցինք ու մեր պզտիկը Տէրովը նուիրեցինք մէյ մը մտածելով նաեւ թէ մի գուցէ Տէրովը հրաշքը ըլլար...: Նոյն գիշերը որ պզտիկը մեռաւ, ամուսինս մինչեւ լոյս պզտիկին քովը նստած Սուրբ Գիրքը կարդաց, բայց Տէրը ուզեց որ Իր քովը տանի մեր Բենիամինը: 1934 Փետր. 23ին Տէրը մեր տանը վրայ Իր շնորհքը թափեց ու ամուսինս Սամուէլը ապաշխարեց: Ես այդ օրէն իսկ տեսակ մը մտածումներու մէջ թաղուեցայ. մէյ մը ամուսնոյս կը նախանձէի, մէյ մը կը ծաղրէի եւն: Վերջապէս 1934 Մարտ 29ին ես ալ ինքզինքս Քրիստոսի խաչին տարի: Քարոզիչ Ս. Պազգալեանը որ եկած էր մեզի այցելութեան, լուրջ կերպով անգամ մը եւս ուզեց զիս յորդորել, եւ ապա կարճ զուլս մը ազդեցիկ լեցունութեամբ կարդալէ յետոյ ծնրադրեց եւ խնդրեց որ ես ալ իրեն հետեւիմ: Օ՛, լաւ կը յիշեմ թէ ինչպէս Սատանան կ'ուզէր զիս ետ կեցնել. երկու կարեւոր ընտրութիւն պէտք էր ընէի այդ իրիկուն: Նախ ուզեցի հպարտութեամբ մերժել խաչին վրայի Փրկիչս, եւ կըրկին մասնակցիլ աներեւոյթ բայց քանդիչ թունաւոր օձին՝ Սատանային հաւատարիմ գործակիցներու բանակին. բայց եղբօրը աղօթքին ժա-

մասնակ Փրկիչն կարծես վար իջած Գողգոթայէն, խաչը շալկած, արիւնոտ գլուխը կախ՝ եկած էր մինչեւ սրտիս դռան առջեւ եւ կ'ուզէր կրկնել միշտ թախանձագին, «Կ'ուզե՞ս քու մեղքերդ ալ իմ վրաս նետել եւ ճիշդ ատոր համար այս վիճակով եկած եմ. եկած եմ այս անգամ ալ քեզի համար, քեզ ալ կ'ուզեմ ազատ հռչակել Սատանայի գերութենէն եւ ես պիտի մեռնեմ որ զուն ազատիս: Զգացի թէ Փրկիչս աւելի զօրեղ ձայնով կը կրկնէր, «Կ'ուզե՞ս ազատուիլ, եկուր Ինձի»: Ու ես խոնարհեցայ, վասնզի մարդու ձայն չէր այս ձայնը, Փրկիչիս ձայնն էր: Ես ամէջայ, լացի, յուսահատեցայ, բայց նոյն Յիսուսը զիս չձգեց, ծոցեալ զիս վեր վերցուց եւ պատմեց թէ ես թէեւ բնաւ զինքը սիրած չէի, բայց Ինքը միշտ զիս սիրած էր, (ու իմ մեղքերս զիս կապած էին ժամանակնի՛ր) ու շատ լացի: Նոյն ատեն բոլոր մարմնովս կը դողայի թէ ես ինչպէս Աստուծոյ պատճառ եղայ որ ինձի համար խաչուի: Ն եր ո ղ ու թ իւ ն խնդրեցի արցունքով իմ Փրկիչէս: Բոլոր էութեամբս տարուած էի Գողգոթայի գագաթը, ճիշդ հոն ուր երեք խաչեր կային, մէջտեղի խաչին վրայ իմ անունս գրուած ըլլալով տեսայ թէ Փրկիչս իմ տեղս գտնուած է. ճիշդ էր Իր պատմածը, ճշմարիտ էր: Փարեցայ Փրկիչիս, եւ խնդրեցի որ իբր իմ փրկութեանս վստահութեան նշան՝ կաթած արիւնովը զիս ծածկէ ու լուայ: Փրկիչս ընդունեց զիս, լուաց զիս եւ նոյն ժամուն իմ մէջս մտաւ խաղաղութիւն մը. ալ շատ ուրախ էի, գտած էի Փրկիչս եւ սկսած էի սիրել: Կ'ուզէի հաւատարիլ Իր սիրոյն, կ'ուզէի ես ալ Տէրոջն համար կանգնիլ եւ քաջաբար վկայել: Փառք, փառք Յիսուսին, իմ Փրկիչիս, այժմ եւ միշտ եւ յաւիտեան:

Ուրախութիւնս շատ չտեւեց. Սատանան կ'երեւի իմ մէջէն փախչելէն յետոյ հին յիշատակներու հառաչին տակ սկսաւ մօտենալ ինձի. կ'ուզէր իր տեղացի ըլլալը փաստել. այնքան ճարպիկութեամբ սկսաւ զիս համոզել թէ ես իրաւ ժամանակի մը համար զինքը վռնտած էի, բայց ոչ շարունակ: Եւ իկոյ մտատանջութիւլ, կառկածիլ, տարակոտիլ ճշմարիտ փրկագործութիւն մը վրայ, բայց փառք Աստուծոյ որ զիս կրկին անգամ յաղթող ըլլաւ այեւայլ միջոցներով ու տարի մը կ'ընէ որ վստահաբար կը կրկնեմ Առաքեալին հետ թէ «Գիտեմ թէ որու եմ հաւատացեր եւ այսօր Աստուծոյ շնորհքովն եմ ինչ որ եմ» Ա. Կոր. ԺԵ. 10:

Դժբաղդութիւն մը չեմ սեպեր, թէեւ քիչ մը դժուար է վկայիլ ուրախութեամբ, թէ մէկ տա-

րի է այսօր, որ հիւանդ պառկած եմ Մարտէյլի Քօնսէփօնի հիւանդանոցին մէջ: Իմ ապաշխարութենէս հազիւ երեք ամիս անցած էր, բժիշկի թելադրանքովը հոս փոխադրուեցայ. զուրկ եմ բոլոր հոգեւոր օրհնութիւններէն, այն ինչ որ պիտի ըսեմ, դժբաղդութեան նման է, ես վստահ եմ թէ այն եղբայրները եւ քոյրերը որ Տէրոջը զատկներու հաւաքական վայրերու մէջ կամ հոգեւոր ժողովներու եւ աղօթածողութիւններու մէջ կըրցած են վայելել մեր Հօրը շնորհքները, ողորմութիւնները եւ օրհնութիւնները, աւելի բաղդաւոր են, եւ անոնք որքան պարտական են մեզի պէսներուն հաւատքի մէջ հաւատարիմ եւ հաստատուն մնալու համար մինչեւ մահ, շարունակ աղօթելու:

Այսու հանդերձ Տէրը զիս եւ հոս գտնուող ուրիշ հաւատացեալները առանց մխիթարութեան թողուցած չէ: Յաճախակի այցելութիւններ կ'ընդունինք քաղաքէն որոնց ամենուն ալ շնորհակալութիւն կը յայտնենք: Անոնցմէ ամենէն հաւատարիմը Կիւլշան եղ. Պատաքեան՝ Տէրը վարձատրէ, մեզի ըրած իր օրհնաբեր այցելութիւններուն համար:

Ալ հիմա Յիսուս միշտ իմ մէջս կենդանի է եւ չի փոխուիր, եւ սակայն օրէ օր զիս աւելի կը փոխէ մինչեւ որ Իր հասակին լման չափին հասցնէ: Եւ գիտեմ թէ իմ Հայրս զիս Իր քովը պիտի տանի աւելի շուտով որքան ես կամ ուրիշներ կը մտածենք: Բայց ամէն օր ալ ես պատրաստ եմ իմ Փրկիչ Յիսուսին հետ Հօրը առջեւ ելլելու: Յիսուս շտկած է իմ այս մարմնաւոր ժամանակաշրջանի դժուարին կէտերը. ամուսինըս Սամուէլը լման գիտակցութեամբ եւ հաւատարմաբար իր կարողութիւնէն աւելին իսկ իմ ցաւիս եւ վիճակիս բաժնեկից է մինչեւ այսօր, եւ վստահ գիտեմ թէ Յիսուս այս միջոցները ինքը միշտ կը դասաւորէ իմ խեղճութիւնս տեսակ մը մոռցնել տալով, մինչեւ որ օր մըն ալ Իր քովը տանի ուր ալ ցաւ չիկայ, արցունք չի կայ, կարօտ չիկայ. հոն միշտ ժպիտ, սէր եւ ուրախութիւն կայ Փրկիչիս հետ յաւիտեան: Փառք Յիսուսին: Ես միշտ կ'աղօթեմ Աստուծոյ հաւատքի ընտանիքին եւ անոր ժրջան գործունէութեան յառաջացման համար եւ մեր Տէր Յիսուսի մօտալուտ թագաւորութեանը զարուն համար, ու կ'սպասեմ որ նոյնպէս շատեր ալ ինձի եւ նման քանի՛ քանի՛ մոռցուած բայց հաւատքի ընտանիքին մաս կազմող անդամներուն հաւատարմութեան եւ քաջալերութեան ու յաղթութեան համար աղօթեն: Ամէն:

Երբոր Յորդանան հասնիմ ես,
Յուրա մահուան երկիւղն վերցուր,
Դուն որ մահը մեղացեալ ես,
Զիս երկինքը Տէր հասցուր:
Փառք պատիւ Բեզ

Միշտ պիտի մատուցանեմ:

Ամէն, եկուր Տէր Յիսուս: Բ. Պետ. Ա. 3-14:
Յայտ. Բ. 10: Ա. Կոր. ԺԵ. 51-58:

Յիսուս Քրիստոսի արիւնովը լուացուած եւ
Քրիստոսի ձրի շնորհքովը փրկուած քոյր մը,
ՎԵՐՈՆԻԳՍԱՅ ԲՐՈՒՏԵԱՆ

Քօնստանդուպոլիս Հիւանդանոց

Մարտէյլ

ԿԵՆԱՅ ԱՄՈՒՆԵՐԷՆ

ԳԻՐՔԵՐԸ ԲԱՅՈՒՆՅԱՆ

Վերջերս դրամատան մը արկղակալը պարտաւորեցաւ խոստովանիլ շատ տարիներու մէջ ըրած շարք մը խորումներուն համար: Շնորհիւ իր ճարպիկ վարմունքին եւ այն համարումին որ կը վայելէր իր մեծերէն, նա կըրցած էր երկար ժամանակ ծածկելու իր գողութիւնները, ունենալով դիտաւորութիւնը այլուստ, ինչպէս շատ ուրիշներ, յետագային ամբողջովին վերադարձնելու:

Օր մը սակայն դրամատունը կողոպտուեցաւ: Գողերուն ձեռք անցուցած դրամին ճշգրիտ գումարը հասկնալու համար, դրամատան վարիչները կը վճռեն որ հաշուակալութեան լուրջ քննութիւն մը կատարուի անմիջապէս:

Բայց արկղակալը տեսնելով որ երբ գիրքերը բացուին իր անպարկեշտութեան ապացոյցը երեւան պիտի ելլէ, այնպիսի անուղղի մը մէջ ինկաւ, որ ինքն իսկ յայտնեց խնդիրը եւ լման խոստովանեցաւ ինչ որ մինչեւ հիմա խորած էր:

Շատ տարիներ այս մարդը խաբած եւ շորթած էր պատիժէ գերծ մնալու յաջողած ըլլալով: Սակայն եկած էր ժամանակը ուր ամէն բան ի լոյս պիտի հանուէր: Երբ գիրքերը բացուեցան իր խաբեւայութիւնները երեւան ելան, ոչ միայն իր մեծերուն դիմաց, այլ նաեւ ամենուն առջեւ:

Սիրելի հոգի, եթէ քու մեղքերդ ջնջուած չեն Յիսուս Քրիստոսի արեամբ, պիտի գտնես զա-

նոնք քու առջեւ երբ գիրքերը բացուին սպիտակ մեծ գահուն առջեւ, որուն վրայ պիտի նստի Սուրբը, Ճշմարիտը, Դատաւորը համայն աշխարհի:

Ամէն անոնք որ այս կեանքին մէջ ընդունած են Յիսուս Քրիստոսը իբրեւ իրենց Փրկիչը, պիտի երգեն, «Անոր որ մեզ սիրեց ու մեզ իր արիւնովը մեր մեղքերէն լուաց... Անոր փառք եւ զօրութիւն յաւիտեանս յաւիտենից» (Յայտ. Ա. 3, 6): Իսկ Յովհաննէս առաքեալ կը յայտարարէ, «Եւ տեսայ պղաթիկ ու մեծ մեռելները, որոնք Աստուծոյ (աթոռին) առջեւ կայնած էին, ու գիրքերը բացուեցան եւ ուրիշ գիրք մը բացուեցաւ, այսինքն կենաց գիրքը. եւ գիրքերուն մէջ գրուածներէն մեռելները դատուեցան իրենց գործերուն համեմատ: Եւ ծովը իր մէջի մեռելները տուաւ եւ մահը ու դժոխքը իրենց մէջի մեռելները տուին, ու ամէն մէկը իրենց գործերուն համեմատ դատուեցան» (Յայտ. Ի. 12-14):

Ի՞նչ սարսափելի բան է իր գործերուն համեմատ դատուիլը, երբ մարդ իր թղթածրարին մէջ մեղքերու անհամար բազմութիւն մը ունի: Եթէ այս առաջին հանդիպումը միայն դատաստանին օրն է, այդ շատ ուշ պիտի ըլլայ քեզի համար: Սակայն կրնաս այս առաջին յարաբերութիւնը ունենալ Անոր հետ դեռ այս աշխարհիս մէջ: Եւ ասոր համար է որ Ան մեզ կը կանչէ ստիպողական կերպով:


Եկուր Անոր հաւատքով, եկուր ինչպէս որ ես, գիտնալով թէ Յիսուս Քրիստոս մեղաւորներուն Փրկիչն է եւ Անով միայն կարելի է Հօրը մօտենալ: Այն ատեն պիտի հասկնաս թէ իր աչքերը, որոնք կրակէ բոցի մը պէս կը քննեն հոգիներուն խորերը, լիցուն են նաեւ ամենաքաղցր սիրով:

Ես չեմ կրնար գքեզ բռնի երկինք տանիլ, սակայն կրնամ եւ պատրաստ եմ լրջօրէն քեզ հրաւիրել այս կարեւոր հարցը նկատի առնելու, «Բանգի ի՞նչ օգուտ է մարդուն եթէ բոլոր աշխարհը վաստկի եւ իր անձը կորսնցնէ, կամ իր անձին համար ի՞նչ ազատչէք պիտի տայ մարդ» (Մարկ. Ը. 36-37):

Խորհէ այս բաներուն վրայ եւ հարցուր բանապետին պէս, «Ինձի ի՞նչ պէտք է ընել որ փրկուիմ»:

Այն ատեն պիտի գտնես Փրկիչ մը որ կը սիրէ ու կը ներէ քեզի: Ու բացուելիք պրքերը ոչ թէ վախ պիտի պատճառեն քեզի, հապա ուրախութիւն, քանզի դատապարտութիւն չկայ Քրիստոս Յիսուսով եղողներուն յաւիտեան:

ԴԱՏԱՍՏԱՆԻ ՕՐԸ



Հաւատքով տեսայ դատաստանի օրը,
Աթոռն էր նստեր ահեղ դատաւոր.
Բոցանիշ աչքով զայրոյթից դիտում,
Իր շրջապատին սարսափ տարածում:

Սուրբ արդարութեամբ անկաշիւտ Արքան
Դատի էր կանչել համայն մարդկութեան,
Ծովից, գետերից եւ գերեզմանից,
Հսկայ աշխարհի բոլոր վայրերից:

Եկած են զիգուած անհամար հոգիք,
Մեղապարտ եւ չար Ադամի սրգիք,
Գլխիկոր, դաժան, ա՛խ, միտք են անում,
Թէ երկրիս վրայ ինչե՛ր չէին անում:

Մախրոն եւ լուռ սարսափով պատած,
Ահից իջեր էին բոլորը կաթնում.
Վերջապէս եկաւ հաշիւի օրը,
Որ պահանջում էր մեծ դատաւորը:

Բացուեց զրքերը անցեալ գործերի,
Ամէն մարդ տեսաւ ով ինչ էր արել,
Գաղտնի եւ ծածուկ անհաշիւ մեղքեր,
Ի յայտ էին եկել զգուշիլի գործեր:

Հպարտ բռնակալք, անխիղճ հարուստներ,
Անհաւատ, տգէտ եւ մոլորեալներ
Գետին էին թափուել ահ ու սարսափից.
Եւ զգուանք իջել սեւ ամօթանքից:

Դատաւորը Սուրբ, արձակեց հրաման,
Կորէք աշտեղից դժոխքի սահման,
Արդար հատուցում աշտեղ կայ ձեզի,
Կրակ ու անէծք, շանթի երկինքի:

ՅՈՎՍԷՓ ԶԱՔԱՐԵԱՆՅ


Սուլթանապատ,

Պարսկաստան

Ու երկրի թագաւորները եւ մեծամեծները եւ
հարուստները, հազարապետները եւ զօրաւորնե-
րը, ու բոլոր ծառաները ու բոլոր ազատները
այրերուն եւ լեռներու ապառաժներուն մէջ
պահուեցան, եւ լեռներուն ու ապառաժներուն
կ'ըսէին, մեր վրայ ինչէք ու մեղ ծածկեցէք Ա-
նոր երեսէն որ աթոռին վրայ կ'ընտրի, ու Գա-
նուկին բարկութենէն: (Յայտ. 2. 15, 16)

Ս. ԳՐԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆ

ՍԻՄՈՆ ՆԱԽԱՆՁԱՅՈՅԶ



Այս առաքեալը կը կոչուի նաեւ Սիմոն Կա-
նանացի (Մատթ. Ժ. 4, Մարկ. Գ. 18): «Նախա-
նայոյզ» (Դուկ. ԺԶ. 15, Գործ. Ա. 13) թարգմա-
նութիւնն է Զելօթ բառին, իսկ Կանանացի աշ-
խարհաբանն է ուրիշ եբրայեցեան բառի մը, որ
նախանձախնդիր կը նշանակէ: Հետեւաբար Սի-
մոն առաքեալի երկու մակդիրներն ալ նոյն նը-
շանակութիւնը ունին եւ կը ցուցնեն թէ նա Յի-
սուսի աշակերտելէ առաջ անդամ էր կուսակցու-
թեանը Զելօթներու, (Նախանձայոյզներու) որոնք
կը մերժէին Հոովմէական իշխանութիւնը Իսրա-
յէլի վրայ ու մեղք կը նկատէին տուրք վճարե-
լը հեթանոս կայսեր, եւ որոնք ոգի ի բոնի կ'աշ-
խատէին ապստամբութեան հարը բռնկեցնել հը-
րէից մէջ Հոովմէական պետութեան դէմ: Ինչ-
պէս Շլաթըր աստուածաբանը իր «Մատթէոսի
Մեկնութեան» մէջ կը գրէ, «Անոնք պատրաստ
էին օրէնքին ամէն մէկ բռնաբարմանը վրէժին-
դիր ըլլալ գործքով, հոովմէական իւրաքանչիւր
անվայել հրամանին դիմադրել ուժով, պատրաստ
էին ո՛չ թէ միայն օրէնքը սորվեցնել, հապա նաեւ
զոհել ստացումք եւ կեանք, որպէսզի Իսրայէ-
լը ազատուէր հեթանոսներէն եւ կարենար ծա-
ռայել Դաւիթի Որդւոյն, զՈր Աստուած պիտի
ընտրէր: Քանի որ անոնք այլեւս չէին ուզեր լը-
ռիկ համբերել, հապա Աստուծոյ հանդէպ շիտակ
հաւատարմութիւնը կը գտնէին՝ ի սէր օրէնքի
տիրապետութեան՝ իրենց կեանքերը զոհելուն
մէջ, ուստի ինքզինքնին կը կոչէին «Նախա-
նայոյզներ» (Զելօթներ):

Զելօթներու այս կոյր ու մոլեռանդ նախա-
նայոյզներն եղաւ զլիաւոր պատճառը հրէ-
ական ապստամբութեան (66-70) եւ Երուսաղէմի
կործանման ու Իսրայէլի ցիր ու ցան ըլլալուն:

Ահա այդ կուսակցութեան մէկ անդամն էր
Սիմոն «Նախանձայոյզ»: Անիկա հակոտնեայ էր
Մատթէոս Առաքեալի, որ իւր մաքսաւոր, բու-
լորովին օրինաւոր կը գտնէր հոովմէական իշխա-
նութիւնը հրէից վրայ եւ որու համար ցնորք
մըն էր հրէական անկախութեան զաղափարը:
Իր առաքեալներու շրջանակին մէջ ընդունելով
թէ Նախանձայոյզ Սիմոնը եւ թէ մաքսաւոր Մատ-
թէոսը՝ Յիսուս կրցաւ գործնականօրէն ապացու-
ցանել թէ Իր սէրը կարող է հաշտեցնել եւ իրա-

րու գործակից ու խաղաղութեան Աւետարանին պաշտօնեայ դարձնել ամենէն հակամարտ ուժերն իսկ: Փառք Անոր սիրոյն անհուն կարողութեանը:

Սիմոն Առաքեալի նկատմամբ ուրիշ ստոյգ տեղեկութիւն մը չկայ եկեղեցեցական պատմութեան մէջ: Աւետարաններն ու Գործք Առաքելոցն ալ զինքը կը յիշեն միայն առաքելոց ցանկին մէջ:

ՅԱԿՈԲՈՍ ԱԼՓԷՈՍԵԱՆ

— — — — —

Աւետարաններու մէջ յաճախ կը հանդիպինք անուններուն մի քանի կիներու, որոնք Գալիլեայէ սկսեալ Յիսուսի ետեւէն կ'երթային ու իրենց ստացուածքներովն ու աշխատութեամբը Անոր կը ծառայէին եւ որոնք հաւատարմաբար ու անձնուիրաբար Անոր հետեւեցան մինչեւ խաչին ոտքը եւ մինչեւ զերեզման: Ասոնք էին Իր մօրմէն զատ՝ Իր մօրաքոյրը Սողոմէ, որ էր Զերեբեանց մայրը, Մարիամ Մագդաղենացի եւ Կղէովպասի կինը՝ Մարիամ:

Այս վերջնոյն որդին էր Յակոբոս Առաքեալ, որուն հայրը Կղէովպաս, կը կոչուի նաեւ Ալփէոս: Այս երկու կոչումներն ալ տարբեր ձեւերն են եբրայեցերէն միեւնոյն անուան, խալիլայի: Ալփէոս անունէն կը ծագի Յակոբոս առաքելոյն Ալփէոսեան մականունը: Կը կոչուի նաեւ «Պղպտիկ», կրտսեր նշանակութեամբ՝ հաւանաբար զանազանուելու համար Յակոբոս Զերեբեանէ, որ իրմէ տարէց ըլլալ կը թուի: Ունէր եղբայր մըն ալ Յովսէս կոչեալ: Ասոնց եղբայրն էր Մատթէոս կամ Ղեւի, քանի որ աս ալ Ալփէոսեան կը կոչուի, բայց կ'երեւի թէ վերջինս միայն չօր կողմանէ հարազատ էր միւս երկուքին, ոչ նաեւ մօր կողմանէ, քանի որ Մարիամի մասին խօսուած ատեն՝ անոր իբր որդիներ կ' յիշուին միայն Յակոբոսն ու Յովսէսը (բաղդ. Մատթ. Ժ. 3, Իէ. 55, 56, Մարկ. Բ. 14, Գ. 48, Ժե. 40, Յովհ. ԺԹ. 25):

Դժբաղդաբար միայն այսքանէ աւելի ստոյգ տեղեկութիւն չունինք այս առաքեալին մասին եւ չենք կրնար որոշ կերպով ըսել թէ ո՛ր էր իր աւետարանական գործունէութեան զաշտը:

Գ. Գ. Խ.

ՍԵՐՏՈՂՈՒԹԻՒՆ

ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԴԱՍԵՐՈՒ ՆԵՐՇՆՁՈՒՄՆԵՐ

— — — — —

ՅՈՒԼԻՍ 7.—

ՄՈՎՍԷՍ ԱՌԱՋՆՈՐԴ ԵՒ ՕՐԷՆՍԴԻՐ

Դաս Ելից ԻԴ. 3-8, 12-48:

Կարգալ ԼԴ. 27-35:

Մովսէս թէեւ «Եզրպտացւոց բոլոր իմաստութիւնովը վարժուեցաւ» (Գործ. Է. 22) բայց եւ այնպէս ինքնին շատ մեծ դէմք մը պիտի չըլլար՝ եթէ Աստուած անոր կեանքին մէջ չմտնէր: «Մովսէսը... ընողը... Տէրն է» Ա. Թադ. ԺԲ. 6, լուսանցք, եբր):

Այս դասը և նոյնիսկ Մովսէսի ամբողջ կեանքը կարելի է հետեւեալ երեք կէտերու մէջ ամփոփել, 1. Դիւքը, 2. Արիւնը, 3. Աստուծոյ ներկայութիւնը: Ամէն հաւատացեալի հոգեւոր կեանքին կենսական կէտեր են ասոնք նաեւ:

1. ԴԻՐԲԸ: Ինչպէս չին ուխտը ունէր տասնաբանեան, նոր ուխտին մէջ ալ կը գտնենք տասնաբանեային համապատասխանող օրէնքներ: Բաղդատէ Ելից Ի. 1-17ի իւրաքանչիւր պատուիրանքը հետեւեալ կերպով.—

Ա. Պատուիրանք, բաղդ. Յուդ. Ա. 21:

Բ. Պատ. բաղդ. Ա. Յովհ. Ե. 21, Ա. Կոր. Ժ. 24, 22

Դ. Պատ. բաղդ. Եփես. Ե. 4: Կոր. Գ. 16:

Դ. Պատուիրանք, բաղդ. Ա. Կոր. ԺԶ. 2:

Ե. Պատուիրանք, բաղդ. Եփես. Զ. 1-3:

Զ. Պատուիրանք, բաղդ. Ա. Յովհ. Գ. 15:

Է. Պատուիրանք բաղդ. Յակ. Դ. 7:

Ը. Պատուիրանք, բաղդ. Եփես. Դ. 28:

Թ. Պատ. բաղդ. Եփես. Դ. 25, Կոր. Գ. 9:

Ժ. Պատ. բաղդ. Եփես. Ե. 5, Կոր. Գ. 5:

«Իմ օրէնքներս անոնց մտքին մէջ պիտի դրնեմ, և անոնց սրտին վրայ պիտի գրեմ զանոնք» (Եբր. Ը. 10):

2. ԱՐԻՒՆԸ: «Ահա... Տէրը ձեզի հետ ըրած ուխտին արիւնը» (Ելից ԻԴ. 8): Եբր. Թ. զլուխը այս համարին վրայ սրուած մեկնութիւնն է Ս. Հոգիին կողմէ: Հոն կը կարդանք թէ Մովսէս «արիւնը... բուն գրքին... վրայ սրակեց» (Է. 19): Ս. Դիւքը կնքուած է Գառնուկին արիւնովը: Երկինք տանող ճամբան Յիսուսի խաչուած (պատուած մարմինէն կ'անցնի (Եբր. Ժ. 19, 20): «Արժանի եւ Դուն այդ Դիւքը առնելու եւ ասոր կնիքները բանալու, վասնզի մօրթուեցար ու

մեզ ծախու առիւր Աստուծոյ Քու արիւնովդ» (Յայտ. Ե. 9): Սուրբ Գիրքը առանց խոցուած Քրիստոսին, ծածկոցով զոցուած Գիրք մըն է: Թէ զրքին վրայ ծածկոց մը կը կենայ (Բ. Կոր. Գ. 14) եւ թէ կարգացողին սրտին վրայ (Բ. Կոր. Գ. 15): Երբ հոգին կը նայի Անոր, զոր ինքը իր մեղքերովը խաչին վրայ խոցեց (Յովհ. ԺԹ. 37) այն ատեն պիտի վերնայ այն ծածկոցը (Բ. Կոր. Գ. 14):

3. ԱՍՏՈՒԾՈՅ ՆԵՐԿԱՅՈՒԹԻՒՆԸ: «Ահա եւ իր ինծի ու հոն կայնէ» Ելից. ԻԴ. 12): Ենովք Աստուծոյ հետ քալեց, Աստուած անոր ընկերակցութիւնը այնքան սիրեց որ զայն կանուխ իր քովը առաւ: Աստուծոյ համար նուազ հաճելի էր Մովսէսի ընկերութիւնը, որուն ղէմքն ալ սկսաւ Աստուածային փառքով փայլիլ (Ելից. ԼԳ. 30): Բայց Աստուած ի իշխանութիւնը կրկին լիոնէն վար իջնել, հոն ուր նա պարտ էր զործել խոտապարանոց ժողովուրդի մը մէջ:

«Ով Հայր, զանոնք որ Դուն ինծի տուիր, կ'ուզեմ որ ուր որ են եւ, անոնք ալ ինծի հետ ըլլան»:

«Ես ալ զանոնք աշխարհ զրկեցի, (իբրեւ ոչ-խարներ գայլերու մէջ): Զեմ ազաչեք որ զանոնք աշխարհէ վերցնես» (Յովհ. ԺԷ. 24, 18, 15):

«Եւ ահա ամէն օր Ես ձեզի հետ եմ, մինչեւ աշխարհիս վերջը» (Մատթ. ԻԸ. 20):

ՅՈՒՂԻՍ 14.—

ՆՈՅՆՍԻ ՀԱՒԱՏԱՅԵԱՆ ԵՒ ԱՐԻ ԿԻՆ ՄԸ

Դաս Հոռթ Ա. 14-22, Դ. 14-17:

Կարգալ Առակ. ԼԱ. 10-20

Նոյեմի հաւանաբար մասամբ պատճառ դառնալ էր իր ամուսնոյն Մովսէսի երկիրը երթալուն: Վաճառի յետոյ նա կ'ըսէ, «Տէրը ձեռքը իմ վրաս ելաւ». «Տէրը ինծի դէմ վկայութիւն տուաւ (կամ զիս խոնարհեցուց): Իրաւցնէ Նոյեմի թէ եւ տիպար հնազանդ կին մը բայց Քանանու երկիրը անյուսութեամբ լքել եւ Մովսէս երթալով լաւ չըրաւ: Աւելի լաւ է Աստուծոյ ժողովուրդին հետ չարչարուիլ, քան թէ մեղքին ժամանակաւոր զուարճութիւնը վայելիլ» Երբ. ԺԱ. 25: Նոյեմի պարտ էր Բեթլէհեմի սովոր Մովսէսի հացէն աւելի նախընտրել:

Մովսէս երթալով Նոյեմի անխոհեմ զանուեցաւ նաեւ իր երկու մատղաշ զաւակներուն վերակութեան զործին մէջ: Զի այս տեսակէտէն Մովսէս աւելի վստահաւոր երկիրն էր (Թուոց ԻԴ. 1-9):

Անոր ամուսինը եւ երկու զաւակները (առանց սերունդ ձգելու) առնելով (զայն «պարպելով»)

Տէրը այցելեց Նոյեմին տակաւին «Իսրայէլի մէջ իր ժողովուրդին չայցելած»: Եւ հոս է որ յայտ կուգայ Նոյեմի կեանքի դերը Հոռթի կեանքին ազդող:

Իրաւցնէ Հոռթի իր հօրը տունը, իր ժողովուրդը, իր երկիրը եւ իր աստուածները ձգելով Իսրայէլի երկիրը գալը ուրիշ կերպով կարելի է քացատրել՝ բայց եթէ Նոյեմի կեանքով: Արտաքուստ ոչինչ կար Իսրայէլի մէջ հրապուրիչ: Հրեայ ազգը Դատաւորաց անկարգ օրերը կ'ապրէր, որու ընթացքին «ամէն մարդ իր աչքին հաճելի կղածը կ'ընէր» եւ Իսրայէլ իր դժբաղի ազգաց գերի էր: Մինչդեռ Մովսէսի թագաւոր կար:

Երբ Իսրայէլի երկիրը սով կը տիրէր, Մովսէսի մէջ հաց կար:

Նոյեմի ամուսնոյն եւ երկու զաւակաց մահերը (առանց սերունդ ձգելու) աստուածային պատիժ մը կարելի է համարել: Աստուած մը ուրեմն որ այնքան խստօրէն պատժած կ'երեւէր իր սեփական ժողովուրդը, անոնց երկիրը եւ Նոյեմի գերդաստանը, այդպիսի Աստուած մը արտաքինապէս զրաւիչ էր: Կրնար երեւիլ:

Բայց այսու՝ Հոռթ Աստուծոյ զաւանթիւն ու վիշտ տեսած իր կեսրտը կ'ըսէ, «Բու Աստուածդ իմ Աստուածս ըլլայ»: Տէրը մինչ Նոյեմին կը «պարպէր» ու «Իր ձեռքը անոր վրայ կը ծանրացնէր», այս վիշտերով ու դառնութիւններով Տէրը Նոյեմին «կը խոնարհեցնէր» (Հոռթ. Ա. 21 լուսանցք): Հոռթի համար Նոյեմի Աստուածը զրեթէ կը նոյնանար Նոյեմի հետ: Մովսէս աստուածներուն չէր նմաներ Եհովան, որուն վշտացնող ձեռքը նաեւ համակ սէր կը դարձնէր Նոյեմին:

Հաւատացեալներս պարտինք «մեր փրկիչ Աստուծոյ վարդապետութիւնը ամէն բանի մէջ գարդարել» (Տիմ. Բ. 10):

ՅՈՒՂԻՍ 21.—

ԴԱՒԻԹ՝ «ԱՍՏՈՒԾՈՅ ՍՐՏԻՆ ՀԱՍԵՄԱՏ ՄԱՐԴԵԸ»

Դաս Ա. Թագ. ԻԶ. 5-12, Բ. Թագ. Ա. 23-27:

Կարգալ Յովհ. ԺԷ. 1-10

Հմր. 8, «Ահա այսօր քու Թշնամիդ քու ձեռքով մատնեց»:

Ճիշդ է թէ Աստուած այդ օրը Լ. ալդ ժամուն Դաւիթի կեանքին «խեղճ» թշնամին անոր ձեռքը մատնած էր. բայց ինչ որ Սրեառայի մարմնաւոր իմաստութիւնը չէր կրնար իրեն ներշնչել, սա էր թէ «Աստուած ինչո՞ւ այդպէս

ըրած էր»։ Մեծ Դաւիթին՝ Յիսուսի նախահայր
այս Դաւիթը սակայն, ունէր Յիսուս Քրիստոսը
մտքէն։ Նա որ իր մեղաւոր շրջանին մարգարէի
աչքերով կը տեսնէր խաչը ու կը գոչէր «Զիս
լուս ու ձիւնէն աւելի ճերմակ ըլլամ» (Սաղմ.
ԾԱ. 7) հոս նաեւ պերագանցելով օրէնքին «Թշ-
նամիդ ատես»ը, կը հետեւէր Աւետարանական
կանոնին, «Բարի ըրէք անոնց որ ձեզ կ'ատեն»
(Մատթ. Ե. 44)։ Դաւիթ իր «խիստ ողորմած»
Աստուծմէն (Սաղմ. 22. 5) ողորմութիւն ը-
նել սորված էր։ Նա որ այնքան յաճախ վայե-
լած էր իր երկնաւոր Հօր ներդրութիւնը, սորված
էր նաեւ ներող ըլլալ իր կարգին։ (Սաղ. 38. 4,
ԾԱ. 4-9, 38. 3, 13. 1, ԻԵ. 18, 22. 5 եւն)։

Երկրորդ կէտ մը սա է թէ Դաւիթ պէտք
էր օրինակը ըլլար Քրիստոսի։ Եզեկ. 17. 23,
24 մէջ Քրիստոս Դաւիթի անունովը կոչուած
է։ (Բաղդ.— Ա. Թագ. Ժ2. 13 եւ Մատթ. Գ.
16, 17։ Ա. Թագ. ԻԲ. 1, 2 եւ Մարկ. ԺԲ. 37;
Բ. Թագ. Ե. 1-5 եւ Յայտ. ԺԺ. 11-16)։

Եւ վերջապէս հիացման արժանի է նաեւ Դա-
ւիթի յարգանքը Տէրոջը օծումին եւ օծեալին
հանդէպ (Ա. Թագ. Ի2. 9)։ Դաւիթ երբեք չէր
կրնար մոռնալ թէ Սաւուղ ալ իրեն նման Աս-
տուծոյ օծումը ունեցած էր։ «Իմ օծեալներուս
մի դպչիք» հրամանը Սաղմոսերգուի մը գրչով
գրել տուաւ Աստուծոյ (Սաղմ. 38. 15)։ Արգեօք
Դաւիթ մինչ՝ իր փառքէն ինկած Սաւուղի գըլ-
խուն վերելը կը կենար, մտածեց թէ եթէ Աս-
տուծոյ շնորհքը չըլլար, իր կեանքն եւս կրնար
նոյնքան աւերակ դառնալ, որքան իր ոտքերուն
առջև քնացող այս մարդունը (Գաղ. 2. 1)։ Ինչ որ
ալ ըլլայ, այս ժամուն Դաւիթ իր ողորմութեամ-
բը, իր Աստուածաման վերաբերմունքովը, ու
սիրալիր համբերութեամբը Առակ. Ժ2. 32ը իրա-
կանացուց։

ՅՈՒԼԻՍ 28.—

ԱՄՈՎՍ ԸՆԿԵՐԱՅԻՆ ԱՐԴԱՐՈՒԹԵԱՆ ՄԱՐ-
ԳԱՐԷՆ

Դաս Ամովս. Է. 7 17։

Կարգալ Յաղ. 2Ե. 7-15։

Ընկերային արդարութեան մարգարէն ըլլա-
լէն առաջ՝ Ամովս Աստուածային արդարութեան
մարգարէն է, բայց նաեւ Աստուածային ողոր-
մութեան մարգարէն։

«Ողորմութիւնը ու ճշմարտութիւնը իրարու
պատահեցան»։

«Արդարութիւնը եւ խաղաղութիւնը իրար
համբուրեցին» (Սաղմ. 2Ե. 10)։

Իր հօտին ետեւէն առնուած այս հովիւ մարգա-
րէն իր գրքին մեծ մասը ուղղած է Իսրայէլի
թագաւորութեան։ Ահարկու պատկեր մը կը ներ-
կայացնէ Իսրայէլի մեղքի նկարագրութիւնը
երբ զայն կ'ամբոյսենք։

«Տէրոջը օրէնքը անարգեցին, Անոր պատուի-
րանքները չպահեցին, իրենց ստութիւններովը
գիրենք մոլորեցուցին» (Ամովս. Բ. 4)։

Արդարը ու տնանկը, աղքատը, չքաւորը,
պարտապանը, զրկուածը կողոպտեցին Բ. 6-8։

Տէրոջը ուխտաւորները գինովցուցին, Անոր
մարգարէները մարգարէութիւն ընելէ արգիւե-
ցին Բ. 12։

Սոսկութիւն, բռնութիւն, զրկանք, յափշտա-
կութիւն ըրին Գ. 9, 10։

Դինեմոլութիւն, կռապաշտութիւն, ու պատ-
ժուելով հանդերձ «Տէրոջը չգառնալ» բղղ. 2Կտ.
Ի2. 14-39 եւ Ամովս. Գ. 6-11։

Անիրաւութիւն, անարդարութիւն, ճշմարտա-
խօսներէն զգուանք, շատ յանցանքներ, ծանր
մեղքեր, կաշառակերութիւն եւն. Ե. 7, 10-12։

Անհաւատութիւն, բռնակալութիւն, սրբապղ-
ծութիւն, աշխարհասիրութիւն, «ոչինչ բանով ու-
րախանալ» 2. 1-13։

Խաղաւորը եւ քուրմը յանցաւոր, Տէրոջը
խօսքը կը մերժեն եւ զայն արգիւել կ'ուզեն
Է. 12, 13։

Զրկանքի հետ կրկնակի խարդախութիւն,
«արդուն պղտիկցնել ու սիկղը մեծցնել» Ը. 4-6
(որպէսզի ցորենը ծախած ատեն պակաս չափէ,
եւ զրաւը (սիկղով) կշռելու ատեն աւելի առնէ)։
Եւ վերջապէս կռուքերով սուտ երդում ընել
Ը. 14։

Ասոնց ամենուն մէջ տիրող մեղքը՝ անարգա-
րութիւնն էր. բաղդ. «Իրաւունքը դառնութեան
եւ արդարութեան պտուղը օշինգրի դարձուցիք»
2. 12 եւ «Իրաւունքը ջուրի պէս թող վազէ ու
արդարութիւնը գորաւոր գետի պէս» Ե. 24։

Մեղքին վարձքը մահ է, ու մարգարէն ար-
դէն ի գործ դրուած պատիժը ցաւ ի սիրտ նկա-
րագրելէ յետոյ՝ կը մարգարէանայ նոր տեղի ու-
նենալիք պատիժին մէկ մասը։ Պիղծ արծաթսի-
րութիւն մը՝ անարդար կեղեքումներով այն աս-
տիճան զայրացուցիչ է՝ որ «Տէրը Յակոբի մե-
ծավայելչութեանը վրայ երդում կ'ընէ ըսելով,
անոնց բոլոր զործերը յաւիտեան պիտի չմոռ-
նամ» (Ամովս. Ը. 7)։

Մարգարէացուած պատիժները որքան ալ որ
սարսափելի ըլլան, (Թ. 4-4 եւն.) բայց այսու
յանկարծ Աստուծոյ բարկութեան մէջ ողորմու-

թիւն ի յայտ կուգայ, եւ ինչպէս մարգարէութեանց մեծ մասը, նոյնպէս ալ (եւ մասնաշատուկ ճոխութեամբ մը) Ամովսի մարգարէութիւնն ալ կը վերջանայ Եփես Բ. 4ի «Բայց Աստուած»ով եւ Եփես. Ա. 7ի «շնորհքին ճոխութեան չափովը» (Ամովս. թ. 14-15): Անշուշտ պատիժի մէջէն յանկարծակի առատ ողորմութեան այս երեւումը պատասխանն է նաեւ մարգարէին է. 2-5ի թախանձանօք աղօթքին, «Ով Տէր Եհովա, կ'աղաչեմ, ներէ. Յակոբ ինչպէ՞ս պիտի կանգնի, քանզի քիչուոր է»:

Վ. Ս.

ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ

ՃԱՆ ՈՒԷՍԼԻ

Ուէսլի իր աւետարանական գործունէութիւնը տարածեց Պրիսթօլի շրջակայքը քաղաքներու եւ գիւղերու մէջ եւս. միջին հաշուով օրական երեք անգամ քարոզելով իւրամէ հեռու տեղերու մէջ: Կը հաշուուի թէ 1739ի վերջին ինը տարիներուն 500 անգամ քարոզեց, որմէ միայն 8.40 անգամները եկեղեցիներու մէջ: Բացօդայ քարոզութիւնները այս առաւելութիւնն ալ ունէին որ Ուէսլի ստիպուած չէր թեմերու եւ անոնց պատուելիներուն սահմաններուն մէջ սեղմուի: Հսկայ բազմութիւններ հրապարակները կը վազէին գինք մտիկ ընելու. անձրեւն ու հոգը չէր յաջողեր զանոնք ցրուել: Պլէքհիթի մէջ 12000 հոգիներու քարոզեց, Կլուչէսթըրի մէջ 7000ի, Բայց մանաւանդ Լոնտոնի մէջ էր որ ամենէն մեծ թուով ունեցաւ: Մուրֆիլտզի եւ Քէնինկլիքնի մէջ մինչև 20000-նոց բազմութիւններ հաւաքուեցան: Անոնք կը բաղկանային ամէն դասակարգի մարդոցմէ որոնք ունէ զաղափար չունէին կարգ ու կանոնի ու պատշաճութեան: Երբեմն անոնք իրենց թոքերուն բոլոր ուժովը «կիցցէ» կը պօռային. շատեր հեծկլտուքով արցունք կը թափէին իրենց մեղքերուն համար, ուրիշներ կը խնդային եւ ոմանք «Ալէլուիա» կը գոչէին: Բարի եւ չարի այնպիսի խառնաշփոթ խառնարդ մը կար հոն որ քարոզիչները զլուխին պիտի կտրոնցէին եթէ Աստուծոյ չաղաղակէին: Այս

ժողովներուն կուգային դոգեր, պոռնիկներ, ծաղրողներ. մէկ խօսքով ամէն տեսակի ժողովուրդ:

Շատ հետաքրքրական եւ մանաւանդ հոգեւորական շինիչ է կարգալ այս ժողովներուն պարզ նկարագրութիւնները Ուէսլիի օրագրութեանց մէջ: Այս թուոյն մէջ պիտի արտատպենք հառաւանդներ այս նկարագրութիւններէն՝ որքան մեր թերթին սեղմ էջերը միգի թուլատրեն:

1739 Փետ. 17.— Պրէսթօրտէ շատոնց հրաւեր ստացած ըլլալով հոն գացի: Պատուելիէն հրաման ուղեցի իր եկեղեցիին մէջ քարոզելու: Ան ըսաւ թէ կիրակի օր մը սիրով պիտի ընդունէր զիս՝ Բայց լուր շրերուն քարոզի սովորութիւն չունէին: Յետոյ քաղաքին մէջ մէկուն գացի որ Պլէթհի մէջ իմ քարոզիս ներկայ եղած էր, Բայց հիմա զայն շատ պաղ գտայ. նախ այս կամ այն կէտին վրայ վիճաբանեցաւ ու վերջապէս որոշ կերպով ըսաւ ինձ թէ իմ գովէճի դասընկերներէս մին իրեն ըսած էր թէ Օքսֆորտի մէջ իմ վրաս միշտ քիչ մը խելագարի աչքով նայած էին: Այսու հանդերձ քանի մը ուրիշներ, որոնք իմ մասին աւելի լաւ գաղափար ունէին, ժողովուրդ հաւաքեցին քաղաքին կից բլուրի մը վրայ, եւ հոն հազարի մօտ հոգիներու եւ ներկայացուցի «Քրիստոս մեր իմաստութիւնը, արդարութիւնը, սրբութիւնը եւ փրկութիւնը»: Պլէթհի վերադառնալով աւելի հսկայ բազմութեան մը քարոզեցի «Ինձի ինչ պէտք է ընել որ փրկուիմ»:

Սեպտ. 9.— Մուրֆիլտզի մէջ մօտ 40000 հոգիներու յայտարարեցի թէ «Ինչ պէտք է ընել որպէսզի փրկուին»: Ժամը 5ին Քէնինկլիքն գացի ուր 20000 հոգիներու պնդեցի մեր յոյսին հիմը եղող «Հաւատաւ Տէր Յիսուսի ու պիտի փրկուիս»: Սեպտ. 16ին Մուրֆիլտզի մէջ 10000 հոգիներու եւ Քէնինկլիքնի մէջ 20000 հոգիներու քարոզեցի սա խօսքերուն վրայ, «Մենք այդ ազանգին վրայով տեղեկացած ենք, որ ամէն տեղ ոտոր դէմ կը խօսին» (Գործ. ԻԸ. 22): Երկու տեղերուն մէջ ալ նկարագրեցի իրական տարբերութիւնը հառարակաց լիզուով կոչուած քրիստոնէութեան եւ ճշմարիտ հին քրիստոնէութեան, որ հիմա իր նոր անուան Մեթոտակա-նութեան տակ կը կոչուի եւ որուն դէմ կը խօսին ամէն տեղ:

Հոկտ. 15.— Ուէլզէ շատ ստիպողական հրաւեր մը ստացած ըլլալով՝ ճամբայ ելայ արեւելիք երթալու: Հոկտ. 15ին առաւօտը Նիւփորթ քարոզեցի ամենէն անդգալ եւ չարակամ մարդոց սա համարին վրայ, «Ինձի ինչ պէտք է ընել որ փրկուիմ»: Տարիքը ուռած մարդ մը ամ-

— Քերականութեան պարտականութիւններդ ըրի՞ր: Դժուար են այս անգամ չէ՞:

— Ուղղագրութեանդ մէջ քանի՞ սխալ ունեցեր ես:

— Բառերդ ամէնը սորվեցա՞ր:

Պարզեւ միշտ յօժարութեամբ եւ ինքնավստահ՝ այլ համեստ ձեւով մը կը պատասխանէր եղած հարցումներուն եւ կը ջանար կարելի եղածին չափ իւրաքանչիւրին գոհացում տալ: Իր ընկերները մեքենայարար էր միայն որ այդ հարցումները կ'ընէին, անոնք պատասխանին սպասելու պէտք չունէին, արդէն գիտէին որ Պարզեւ իր բոլոր պարտականութիւնները լրիւ եւ շիտակ կատարած դպրոց կուգար: Եթէ օգնութեան եւ կամ ունէ բացատրութեան պէտք ունենային, համոզուած էին թէ Պարզեւ ամենէն վստահելի եւ հաճոյակատար բարեկամն էր իրենց, եւ իր օժանդակութիւնը երբեք չէր զլանար:

Զաւէն, բարեկեցիկ ընտանիքի գաւազէն էր: Ան կը հիանար Պարզեւի ուշիմութեան վրայ, կը փափաքէր անոր նման բարձր նիշեր ստանալ եւ գովեստներու արժանանալ, սակայն աշխատասէր չէր եւ իր ժամանակին մեծ մասը խաղերով ու գուարճութիւններով կ'անցնէր: Ան կը կարծէր թէ Պարզեւ զաղտնի եւ հրաշալի միջոց մը ունէր գտնելու գիտնալու, եւ եթէ ինք ալ այդ գաղտնիքին տիրանար, Պարզեւին պիտի հաւասարէր. ուստի օր մը խորհրդաւոր կերպով հարցոյց անոր,

— Սիրելի ընկեր, ինչպէ՞ս կ'ընես որ միշտ դասերդ կրնաս գիտնալ, ամէն գժուարութեան մէջէն կ'ելլես:

— Աստուծոյ կ'աղօթեմ որ ինծի օգնէ, պատասխանեց Պարզեւ, որ կերականօրեայ դպրոցի շաշակերտ էր: Եւ փոքր հասակէն աղօթք ընել սովորութիւն ըրած էր իրեն:

Զաւէն ուրախացաւ եւ միտքը դրաւ որ ինք ալ աղօթէ: Հետեւեալ առտու երբ դպրոց եկաւ, շիտակ վազեց Պարզեւի մօտ եւ բաւ գարմացած, «Ես ալ աղօթեցի Աստուծոյ որ ինծի օգնէ, բայց նորէն բնաւ բան մը չեմ գիտեր»:

— Դասերդ սորվեցա՞ր, հարցոյց անոր Պարզեւ:

Ո՛չ, պատասխանեց Զաւէն:

Ուրեմն չես կրնար գիտնալ: Պէտք է աղօթես, սակայն պէտք է նաեւ աշխատես:

Որքան պզտիկներ եւ մեծեր կան, որոնք այս ճշմարտութիւնը չեն գիտեր: Անոնք կ'աղօթեն, այո, առանց աղօթելու չըլլար, կ'ըսեն, բայց այդքանով միայն կը բաւականանան, եւ կը

մոռնան թէ պէտք է աղօթեն եւ սկսին զործել, որպէսզի Աստուած իրենց գործը օրհնէ եւ ամեն կերպով տիրացնէ եւ յաջողէ:

Յ. Ք.

ՎԱՆԱ ԱՍՏՈՒԾՈՅ ԳԱՌԸ,

Եկեղեցիի մը մէջ, բարձրութեան մը վրայ գառնուկի մը արձանը դրուած է: Այս գառնուկը պատմութիւն մը ունի: Եկեղեցին շինուած ատեն երբ խոշոր քարերը կը տեղաւորէին, գառնուկ մը եկաւ պատին քով խոտ կրծելու: Յանկարծ գործաւորներէն մէկը որ նոյն շէնքին բարձր տեղին վրայ կ'աշխատէր, իր հաւասարակշռութիւնը կորսնցուցած, տախտակներուն վրայէն վար ինկաւ: Ամէն մարդ զինքը մեռած կարծեց, սակայն զարմացան որ նա կրկին ոտքի վրայ ելած էր: Ի՞նչ պատահեցաւ սակայն: Մարդը գառնուկին վրայ ինկած ու զայն ջախջախած էր, բայց ինք ազատուած էր: Նա իր կեանքը գառնուկին կը պարտէր:

Սիրելի մանուկներ, մեզի համար ալ Գառնուկ մը գոհուած է: Եսայի մարգարէն կ'ըսէ թէ մեր ամենուն անօրէնութիւնը Աստուած Անոր վրայ զարկաւ. ու այս հարուածը այնքան զօրաւոր էր որ, ինչպէս որ, գառնուկը զործաւորին ծանրութեան տակ չկրցաւ դիմանալ, այնպէս ալ սուրբ Գառնուկը չկրցաւ դիմանալ մեր մեղքերուն հաշուածին տակ եւ մեռաւ, բայց մենք ազատեցանք, փրկուեցանք, քանզի մեզի համար եւ մեր տեղը մեռաւ Նա: Արդ, մենք մեր կեանքը կը պարտինք Աստուծոյ Գառնին: Զեղով շատերը գոց սորված են Եսայի մարգարէին խօսքը, «Անիկա մեր մեղքերուն համար վիրաւորուեցաւ եւ մեր անօրէնութեանց համար ձեռուեցաւ, մեր խաղաղութեան պատիժը Անոր վրայ եղաւ, ու Անոր վէրքերովը մենք բժշկուեցանք»: Ան որ Յիսուսի կը հաւատայ, յաւիտենական կեանք ունի: Դուք ալ կըրնա՞ք ըսել, «Անիկա իմ մեղքերուն համար վիրաւորուեցաւ եւ իմ անօրէնութիւններուն համար ձեռուեցաւ, իմ խաղաղութեան պատիժը Անոր վրայ եղաւ եւ Անոր վէրքերովը ես բժշկուեցայ»:

Le Gérant : Mr. le PASTEUR KALTENBACH

Imp. Y. ARMEN & Cie, 39 Rue St - Savournin Marseille

ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐՈՒ ՄԻՒՆԱԿ

Միջ ընթերցողական օժանդակութիւն.—

Գոհունակութիւնով կը հաստատենք թէ «Բան-բեր»ի կողքին վրայ մեր հրատարակած նամակը լայն շրջանակի մը մէջ արձագանք գտած է, ո՛չ միայն վճարելու անկարող ընթերցողներու հա-մար բաժնեգին մը վճարող քանի մը եղբայրներ ու քոյրեր գտնուեցան, եւ որուն շարունակու-թիւնը շատ սիրելի եւ գնահատելի է, հապա՛նակ սոյն քրոջ գանազան նուէրներ եկան, որոնց վեր-ջինն է Ֆրէզնոյէն սիրելի ընթերցողի մը միջո-ցաւ հաւաքուած 17 տօլարը, որ Տիկին Արաքսի Թերզեանի միջոցաւ մեր ձեռքը հասաւ սոյն քը-րոջը ղրկելու:

Մեր շնորհակալութիւնները կը յայտնենք քրոջ կողմէն այդ գումարին համար ալ:

Գործը մերն է եւ Ձերն է.—

Խմբագրութիւնս կը փափաքի իր ներքին զգացումը ամենուի ալ յայտնի ընել:

«Բանբեր»ը իրաւ մենք սկսած ենք տասը տարիներ առաջ եւ մենք կը կառավարենք, բայց այդ տարիներու ընթացքին Ձեզմէ շատեր նոյնիսկ առաջին թիւէն սկսեալ կարդացած են զայն, որով «Բանբեր» իրենց տասը տարուան բարեկամն է, ուրիշներու թերեւս քիչ մը աւելի պակաս տարիներու բարեկամ մը: Այսքան տա-րիներու բարեկամ մը կը կոչուի այլեւս մտե-րիմ բարեկամը: Նաեւ այդ տարիներու ընթաց-քին զուք ալ մեզի հետ միասին Ձեր դրամական օժանդակութեամբ եւ բաժնեգներովը սատարե-ցիք անոր յառաջացման եւ կայուն պահեցիք զայն: Անոր շահերը Ձեր շահերը եղան, ուստի զուք բաժին ունիք անոր մէջ: Ալ հեռաւոր ըն-թերցող մը չէք, այլ «Բանբեր»ի ընտանիքին մէկ անդամը, որուն շահերը նաեւ Ձերինն է, ա-նոր ցաւը Ձերինը, անոր ուրախութիւնը Ձերինը:

Ասկէ յետոյ ըսելու ենք «Իմ Բանբերս», «Մեր Բանբերը»: Այս շատ բնական բան մըն է եւ այդպէս ալ ըլլալու է: Ուստի Ձեր կապը աւելի սեղմեցէք անոր հետ, ղրկելով ձեր կենսագրա-կանները, ձեր փոքրածառութիւնները, ձեր յօդ-ուածները, որպէսզի հետզհետէ երևնան անոր էջերուն մէջ: Հոն իրարու հետ խօսելու ենք մենք աւելի լայնօրէն քան որ մինչեւ հիմա ը-րած ենք:

Արտայայտուինք որոշ, յստակ եւ համաձայն:

Հարց ու պատասխան.—

Մեզի կը հարցուի թէ արդեօք յարմար չէ՞ր ըլլար որ երբեմն հարցեր ղրկուէր խմբագրու-թեան եւ մենք ատոնց պատասխանէինք «Բան-բեր»ի ընթերցողներու սխնակին միջոցաւ:

Կը պատասխանենք թէ շատ սիրով պատ-րաստ ենք այդպիսի հարցումներ ընդունելու եւ անոր պատասխանը տալու: Մեր բոլոր գործա-կից կղբայրները պատրաստ են այս հարցմանց պատասխանելու: Ուստի եթէ հարցում մը ու-նիք, առանց քաշուէլու ղրկեցէք, անոնց պա-պասխանը թերեւ ուրիշներու ալ օգտակար ըլլայ:

Կ'աղօթե՞նք իրարու համար.—

«Բանբեր»ի ընթերցողները նաեւ գեղեցիկ պատեհութիւն մը ունին զոր շահագործելու են: Աղօթելու ենք մեր անդամակիցներուն համար: Մեր կարդացած եւ անոնցմէ օգտուած յօդուած-ներուն համար աղօթենք որ ուրիշներու ալ օգ-տակար եւ օրհնաբեր ըլլան: Մեզի համար ալ աղօթեցէք կղբայրներ, որ մեզի խօսք տրուի...

Ձեզ կղբայրները ԽՄԲ. «ԲՍՆԲԵՐ»ի

ձան Ուէսլին կը կարդա՞ս:

Rédaction du "PANPÈRE"

7, Rue Papère - MARSEILLE (France)

Imp. Y. ARMEN & Cie

39, Rue St.-Savournin - MARSEILLE

ՀԱՅ ԱՒԵՏ. ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ՊԱՇՏԱՄՈՒՆՔՆԵՐ՝ ՅՐԱՆՍԱՅԻ ՄԷջ

(Շարանամիջի աղօթածողովներու մասին հարցնել տեղոյն վրայ):

ՄԱՐՍԷՅԷ—Հովիւ' (Վեր.) Յ. Ն. Ղազարոսեան
7 Rue Papère.

Կիր. ժամը 13 45ին քարոզածողով, 13 R. Delille

15 30ին աղօթածողով, 11, Rue de l'Eclipse

8 30 ին կիր. դաս մեծերու » »

Մանկանց համար

Կիր. դասեր ժամը 9. 30ին քաղաքին մէջ

Սէն ժուլիէն եկեղեցւոյ աղօթատեղիին մէջ

Լէզ Օլիվ, Սէն ժէրոմ, Ս. Միք. Ալք. Պուլ.

վար ժող մասնաւոր քնակարաններու մէջ:

Շարանամիջի ժողովներ

Բ.շր. ժամը 2ին Սէն Միք. Ալք. Պուլ.

Գ.շր. ժամը 2ին Սէն ժուլիէն եւ Լէզ Օլիվ

Գ.շր. 19 30ին քաղաքը 11, Rue de l'Eclipse.

Ե.շր. ժամը 20ին Սէն ժէրոմ

Ուր. ժամը 20ին Camp Victor Hugo

Սէն Լուի.—Քարոզիչ Պատ. Վաֆան Մաֆսկեան

Chapelle Evang. Arm. Bd. Escalon, St. Loup

Կիր. ժամը 8ին մանկանց կիր. դաս:

9. 30ին Ս. գրական ուսումն

16 ին քարոզածողով:

Սէն Մարի Մարի.—

Կիր. ժամը 16ին աղօթածողով:

Լ.Ս. Սիմոն.— Քարոզիչ՝ Պատ. Ս. Պապալեան

24 Rue Fougasse

Կիր. ժամը 9. 30 ին աղօթածողով

Ֆրանս. եկեղեցիին մէջ

15 ին քարոզածողով,

Մանկանց կիրակնօրեայ դաս նոյն տեղը

.....

ԲՕՆՏ ՕՊԷՆԱՍ—Հովիւ' Պատ. Ա. Փափազեան

Pont-d'Aubenas, (Ardèche)

Կիր. ժամը 8. 30 մանկանց կիրակ. դաս

10. 15 քարոզածողով

18. 30 աղօթածողով

Սէն Փիլի.—

Կիր. ժամը 10ին մանկանց կիր. դպրոց:

16. 30 ին քարոզածողով եւ

աղօթածողով

ՄՕՆՔԷԼԻՄԱՐ.—

Կիր. ժամը 13ին մանկանց կիր. դպրոց

14ին քարոզ եւ աղօթածողով:

.....

ՎԱԼԷՆՍ—Հովիւ Բրոֆ. Գ. Գ. Խաչիկեան

55 Ave. Jean Jaurès Bourg les Valence

(Drôme)

Կիր. ժամը 13ին քարոզածողով Ֆրանս

եկեղեցիին մէջ

ՌՕՄԱՆ.—

Կիր. քարոզածողով:

ԼԻՕՆ—Հովիւ' Պատ. Ժ. Պարսոմեան,

18, Rue du Dr. R. batel

Կիր. ժամը 9. 45ին քարոզածողով,

5 Cours Lafayette, 8 Passage Coste.

11ին աղօթածողով նոյն տեղը:

15 ին երիտասարդութիւններու

ժողով (15 օրը անգամ մը):

18 Rue du Dr. Rebatel.

ՏԷՍԻՆ.—

Կիր. ժամը 13. 45ին քարոզածողով,

15ին աղօթածողով: Rue Wilson.

ՍԷՆ ՄՕՐԻՍ

Կիր. ժամը 10ին քարոզ եւ աղօթածողով:

ՎԻԷՆ.—

Կիր. ժամը 15ին քարոզածողով

Rue Lafayette.

ՓՕՆ ՏՐ ՇԷՐԻԻ.—

Կիր. քաղաքային եւ աղօթածողով

(15 օրը անգամ մը):

.....

ՍԷՆՔԷԼԻՄԱՐ—Քարոզիչ Պատ. Խ. Աբրահամեան

2. Place de la Paroisse.

Կիր. ժամը 10. 30ին քարոզածողով

51 Rue de la République.

17ին աղօթածողով

Արմէ տի. Սալիւս սրահին մէջ

ՍԷՆ ՇԱՄՕՆ.—

Կիր. ժամը 14ին քարոզածողով

Mairieի մէջ, Justice de la Paix սրահը

.....

ԲԱՐԻՉ—Հովիւ' Պատ. Զ. Բ. Պառաքեան,

10 bis Villa de la Gare, Vanves (Seine)

Կիր. ժամը 14 30ին քարոզածողով

37 Rue Tournefort Paris 5^e

Metro Mouhe Aut. K

Ամսոյն Գ. կիրակին ժամը 16. 30ին Ե.

Ք. Ը. երկուս միութեանց ժողովները

Կիր. ժամը 20. 30ին աղօթածողով

ժամը 10ին կիրակնօրեայ դաս

59 Ave. du Bas Meudon Ile St Germain

Issy les Moulinaux

ԱԼՖՕՐՎԻԼ—Քարոզիչ՝ Պր. Մ. Վէֆլեան

25 Rue Blanchi, Alfortville

Կիր. ժամը 15. 30ին պաշտամունք

Rue des Brochets, Alfortville

Ժամը 4ին կիր. դաս